



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1560

17

9, -76

5-59

Գրքապահ, Գ.

17

Տ Դ Ա Յ Ո Յ

2.76 Ի Բ Ե Ն Յ Ծ Ն Ո Ղ Ա Յ
Ե Ի

Ի Բ Ե Ն Յ Մ Ե Ծ Ե Բ ՈՒ Կ Ն ՈՒ Ն Ե Ց Ա Ծ


Պ Ա Ր Տ Ա Ի Ո Ր ՈՒ Թ Ի Կ Ն Ե Բ Ը

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ա Լ Ի Գ Ա Ղ Ա Ի Ա Կ Ա Ն Ե

Ա Ր Դ Ե Ա Մ Բ

Հ Ա Յ Կ Ա Ջ Ն Ե Ա Ն Ը Ն Կ Ե Բ ՈՒ Թ Ե Ա Ն
Ի Պ Ե Շ Ի Կ Թ Ա Շ

Ի Պ Ա Տ Բ Ե Ա Բ Ի ՈՒ Թ Ե Ա Ն Կ. Պ Օ Լ Ս Ո Յ
Տ. Ս Ա Ր Գ Ս Ի Ա Ր Բ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի



Ի Կ. Պ Օ Լ Ի Ս Ի Ղ Ա Լ Ա Ռ Ի Ա
Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Յ Ո Վ Հ Ա Ն ՈՒ Մ Ի Ի Հ Ի Ն Տ Ի Ս Ե Ա Ն

= 1861 =

1008

131

2010

25

Printed

Printed in Turkey

9129-42



979

39

2001

ԱՌ Ազգօգուտ Ընկերութիւնն :

Թէպէտ և Գրքուկիտ առաջին տպագրութիւնը՝ Խասգիւղի Ներսիսեան վարժարանին աշակերտաց Ընկերութեան արդեամբն էր, բայց որովհետեւ այն Ընկերութիւնը, որուն անունը ցաւելով կ'ըսեմ, շատ մը ազգօգուտ գիրքերու ճակատը գրոշմուած տեսնել կ'երեւակայէինք, դժբաղդաբար հիմա իր գոյութիւնը կորուսած է, և մինչև Ներսիսեան վարժարանը իր ատենէ մ'ի վեր կորուսած նախանձելե բարեկարգութիւնը վերստին ձեռք չձգէ, և մինչև բարերար և առաքինի ձեռք մը իր պաշտպանութիւնը չկարկառէ, յիշեալ Վանուց ընկերութեանն ալ իր նախկին յարատեւութիւնը և արդիւնաւորութիւնը ձեռք բերել դժուարին կը սեպուի: Վասնորոյ սոյն գրքուկիտ երկրորդ տպագրութիւնը պարտաւորեցայ յանձնել Պէշիկթաշի Հայկազնեան Ընկերութեան, որ արդէն ծանօթ է իր արդիւնքովը Հայ հասարակութեան: Ուստի իմ անկեղծ շնորհակալութիւնս կը յայտնեմ Հայկազնեան Ընկերութեան, որ իմ այս

ընչին աշխատութիւնս տրտուելու կը բարեհաճի. այս
է իմ ուրախութիւնս, և վարձքս այն՝ էթէ Հայ-
կազն մանկտին և թերեւս հասակակիցներո, հոս
Գազղիացի համբաւաւոյ հեղինակի մը գրածներէն
օգուտ քաղեն, վասն զի շեմք կրնար ուրանալ, որ
Հայ ազգին մէջ ալ այս նախնական ուսմունքին մեծ
կարօտութիւն կայ:

Իմ խորին յարգանացս հաւատարիքը նուիրելով
Ազգօգուտ Ընկերութեանն՝ մնամ, յարատեւութեան
և երջանիկ յաջողութեանց նորին ցանկացող:

Ն. ԶՕԿԵՅԵՆ

30 Օգոստոս 1861

Տ Ղ Ո Յ

ԻՐԵՆՑ ԾՆՈՂԱՅԸ ՈՒՆԵՑԱՃ

ՊԱՐՏՔԵՐԸ



ԾՆՈՂԱՅ ՀԱՄԱՐ ՊԱՐՏՔ ԵՂԱՃ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ



ՄՍՏՈՒԼԾ իր հինգերորդ սրտու-
ուիրանին մէջը մարդուս ըսաւ “ Բու
հայրդ ու մայրդ պատուէ՛, որ երկայն
կեանք մը վայելես ” :

Մ. յն քաղաքական օրէնքը՝ որոնց ա-
մեն աղգ պարտաւոր են հնազանդելու,
կը պարունակէ սա յօդուածը. “ Տղայ
մը ամեն հասակի մէջ իր հայրն ու մայ-
րը պիտի պատուէ ու մեծարէ. անոնց
խշտանութեանը սակն է ինչուան որ

այրու թեան հասակը հասնի ” : Ուրեմն Մատուածային և քաղաքական օրէնքը մի և նոյն բանը կը հրամայեն . կը բօնքն ու հայրենիքը , որոնք իշխանութիւն ունին մեր վարքը ու զղելու , մի և նոյն պարտականութիւնը կը դնեն մեր վրայ :

Ի այց թէ որ վերոյիշեալ Մատուծոյ պատուիրանքը ու քաղաքական օրէնքը մեզի ծանօթ չ'ըլլային ալ , մեր ծնողքը պատուելու պարտականութիւնը միշտ նուիրական բան մը պիտի ըլլար , որովհետեւ նոյն օրէնքը գրուած է մեր սրտին մէջը . անիկայ մեր բնութեանը մէկ օրէնքն է :

Արդարեւ ապերախտութիւնը մտլու թիւններուն ամենէն ատելին է . և երախտագիտութիւնը պարտքերուն աւմենէն սրբազանն է :

Ուրեմն մեր հօրմէն ու մեր մօրմէն աւելի երախտագիտութիւն որո՞ւ կը պարտաւորինք :

Մենք չկայինք , և Մատուծմէ ետքը ,

մեր կեանքը մեր ճնողացը սրտուաւ որ
 ենք . անոնցմով է որ կը վայելենք այն
 բոլոր բարիքը , որ Նախախնամութիւ-
 նը շնորհած է մարդկային ազգին , ա-
 նոնցմով է որ մենք եղած ենք մարդ ,
 քրիստոնեայ և Հայ , անոնցմով է որ
 ունեցեր ենք Աստուած ճանչնալու և
 անոր ծառայելու անգին երջանկու-
 թիւնը , և առաքինութեան համար
 Աստուծոյ խոստացած վարձքերը վայել-
 լելու յոյսը :

Մենք տկար ու ամեն տեսակ ցաւ
 ւերու ենթակայ կը ծնանինք , մեր ծը-
 նողքը անոնցմէ մեզ կը սահապանեն
 անխոնջ և անյաղթելի գորովանօք ու
 մտադրութեամբ : Մենք կը ծնանինք
 ամեն բանէ զուրկ , մեր ճնողքը մեզի
 հարկաւոր եղած օգնականութիւնները
 առատօրէն ընելէն ետ չեն կենար :

Մենք կը ծնանինք տգէտ , մեր ծը-
 նողքը մեր դատողութիւնը կը կրթեն ,
 մեզի կը սովորեցնեն ամեն բան ճանչ-
 նալ ու խօսիլ , այն ամեն բաները որոնք

մեր ծնած ատենը չունինք, ու մեծցած
ժամանակնիս մեզի հարկաւոր են, կը
տրուին մեզի իրենց խնամքովը :

Մեր ծնանելէն ալ առաջ մեր հայ-
րը կը մտածէր մեզի համար, կ'աշխա-
տէր մեզի օգտակար ըլլալիք բաները
հաւաքելու, կարելի եղածին չափ մեր
օգտին համար մեծ խնայութիւններ
կ'ընէր, շատ բաներէ ինքզինքը կը զը-
կէր, որ մեզի բան մը չսրակսի :

Մեր մայրը կարելի է որ մեզի հա-
մար՝ հօրերնուս ալ աւելի բաներ կ'ը-
նէ. իր տղան իր սրտայնին մէջը կը
կրէ, անոր կեանք կուտայ, կը դիւեցնէ
անիկա ու իր բոլոր խնամքները առա-
տօրէն կը մատակարարէ : Սակայն նա-
րածին տղան դեռ չճանչնար զանիկա՝
ուսկից որ այնչափ գորովանաց նշաններ
կ'ընդունի. չկրնար խմայընել իր սի-
տայքը, բայց մայրը կը ջանայ գուշա-
կել ինչ որ անոր սէտք է, ինչ որ անոր
հաճելի կրնայ ըլլալ. չգաղբիւր անոր
համար գիշեր ցորեկ չարչարուելէն,

առանց գիտնալու թէ այնքան նեղու-
թեանց փոխարէն ինչ վարձք պիտի ըն-
դունի :

Տղա մը հիւանդութեան ատենը
հայրն ու մայրը անոր համար ժրաջան
խնամք կը տանին, չեն հոգար իրենց
անձնական առողջութիւնը՝ անոր բժը-
կութեանը հսկելու համար :

Արդոյն միշտ որ չ'ըլլայ թէ բանէ
մը զրկուի, և իրենց առ Աստուած մա-
տուցած աղօթքին մէջ անդադար ի-
րենց ազուն համար բարիք կը խնդրեն :

Արքայի ուսման պարապելու կարող
կ'ըլլայ, կը փութան անոր սովբեցնել
ինչ որ օր մը պիտի կրնայ իրեն օգտաւ
կար ըլլալ : Անիկա դպրոց կը խրկեն, ա-
նոր կրթութեանը համար ամենեւին
ծախքի չեն խնայեր, բանի մըն ալ զան-
ցառութիւն չեն ըներ անիկա առաքի-
նութեամբ զարդարելու, և կրօնից,
արդարութեան ու պատուոյ զգաց-
մունքներով անոր սիրտը գրաւելու :

Անիկա իր ասլուստը պատուաւոր

կերպով հոգարու վիճակին մէջ կը դը-
նեն, իրենց աստիճանին ու հարստու-
թեանը համեմատ : Նաև երբեմն ա-
ղէկ վիճակի մը մէջ դնելու համար, ի-
րենց կարողութենէն վեր ծախքեր և
զոհեր կ'ընեն :

Երբոր ամուսնանալու հասակին կը
հասնի, իրենց ունեցածին մէկ մասէն
զիրենք կը զրկեն, և մնացորդն ալ կը
խնայեն մեծ ջանքով՝ իրենց մեռնելէն
ետքը անոր ձգելու համար :

Մէկ խօսքով . անդադար զբաղած
են իրենց տղուն երջանկութեանը վը-
րայ, անոր համար անփոփոխելի գորու-
վանք մը ունին, կարծես թէ միայն
անոր համար կ'ապրին :

Ուրեմն տղայ մը ի՞նչպէս չունենար
բոլոր իր կենացը մէջ չափազանց խո-
րին երախտագիտութիւն մը իրեն հօրն
ու մօրը :

ՁԿԵՈՐՍԵ ՈՒ ԻՐ ՏՂԱՆ

Տիէթ քաղքին մէջ տարիքը առած համեստ ձկնորս մը՝ Պօղոս անուհով տղայ մ'ուներ :

Կրնար հանգստութեամբ ապրիլ, շատ քիչ աշխատելով և ինքզինքը ալեկոծեալ ծովու վրայ մրրկայոյզ գիշերները յաճախ վտանգի մէջ չձգելով . բայց իր տղուն օգտակար ըլլալու համար, յօժարութեամբ կը կրէր բոլոր այն աշխատութիւնները և բանի տեղ չէր դներ այն վտանգները :

Պօղոսին մայրը իր տղուն վրայ շատ իննամբ ու սէր ուներ : Պօղոս երկու անգամ իր տղայութեան ատենը շատ վտանգաւոր հիւանդութենէ բռնուեցաւ, ու հաւաստեալ պիտի մեռնէր, թէ որ առանց իր մօրը խնամոցը և անձնանուիրութեանը մնար : Ուրեմն իր կեանքը քանի մը անգամ անոր սպարտական էր : Արբոր բան մը սովորելու կարող եղաւ, իր ազնիւ ծնողքը անխիտ

դարոց խրկեցին : Պօղոսը արագընթաց
 յառաջադիմութիւններ ըրաւ : Աւ-
 սուցիչը անոր յաջողակութեանը վրայ
 օւրախանալով, յարգորեց իր աշակեր-
 տին ծնողքը՝ որ կրցածնաւն չափ ալ
 աւելի առաջ տանին անոր ուսմանը :
 Անոր ալ աս բանին հաճեցան, և այս
 ծախքին կարող ըլլալու համար իրենց
 աշխատանքն ու խնայութիւնը աւել-
 ցուցին :

Հատ անգամ այս բարի հայրը և
 այս ազնիւ մայրը իրենց կերակուրին
 համար, կտոր մը հայր ու բաժակ մը
 հասարակ գարեջուրը բւական կը
 համարէին, որպէս զի կարող ըլլան
 վճարել Պօղոսին վարժապետներուն
 վարձքը, և իրեն ուսմանցը պէտք ե-
 ղած գիրքերը գնել : ()րհնեց (Սու-
 ուած այս ազնիւ ծնողոց ըրած զոհե-
 րը, և սղուն բարի վարքը վարձատ-
 րեց : Պօղոս՝ վարժ միանգամայն և քաջ
 նաւաստի մը եղաւ :

Հաս գեղեցիկ գործքերով նշանա-

և որ ըլլալէն ետքը , ընդունուեցաւ Տէրութեան ծովային զինուորութեան մէջ՝ պաշտօնատարի պատուով , և քիչ ժամանակէն բարձր աստիճանի մը հասաւ :

Այն ատեն իր ծնողացը համար պարտելով գեղեցիկ տուն մը վարձեց , և փութաց հոգալ այն բոլոր բաները , որոնք կրնային նստատ մ'ըլլալ իրենց ծերութեան օրերուն երջանկութեանը :

Օրվուն վրայ չեղած ատենը աւնոնց հետ կը բնակէր , անձամբ անոնց կը ծառայէր , և բոլոր գիշերները աւնոնց հետ կ'անցունէր : Միշտ յայտնի կը ցուցընէր անոնց՝ իր սիրոյն չափ ալ մեծարանք , մեծ հոգ կ'ընէր որ իրեն սցեկութեան եկողները հաւասարաւ պէս իր ծնողքն ալ պատուեն , և բընաւ չէր վայելէր մէկ զուարճութիւն մը՝ առանց իր ծնողքը մասնակից ընելու : “ Իմ սիրելի աղաս , կը պօռային այս յարգելի ծնողքը , մէնք քեզի ինչէր պարտական չենք ” :

“Բուք ինձի պարտք մը չ'ունիք, կը պատասխանէր անոնց, իսկ ես ամէն բան կը պարտաւորիմ ձեզի. ես ձեզի կը պարտաւորիմ ինչ որ եմ, ինչ որ ունիմ և ինչ որ գիտեմ: Բոլոր ձեռքէս եկածը ընելու ալ ըլլամ, երբէք չպիտի կրնամ այսպիսի սրբազան պարտքի մը հատուցում ընել”:



ՈՐԴԻՒԱԿԱՆ ՍԵՐ

Սեր սիրած բոլոր բաներէն աւելի կը պարտաւորինք մեր հայրն ու մայրը սիրել, որովհետեւ բնաւ ուրիշ մէկը չըներ մեզի անանկ ծառայութիւններ որ անոնց բարեացը հաւասար գան:

Բոլոր մեր կենաց ընթացքին մէջը ամենեւին, ոչ երբէք չպիտի գտնանք անանկ մէկը որ մեզի այնքան սիրէ, որքան որ մեր ծնողքը մեզի սիրած էն: Այն բարեկամները որոնք ետքը

մենք պիտի ընտրենք, որքան որ իրենց սէրը անկեղծ ու եռանդուն ալ ըլլայ, կրնան մեզի երեսի վրայ թողուլ կամ նենգել. հեռաւորութիւնը կամ ընտանեկան նոր կապերը, կամ նորէն ստացուած բարեկամութիւնները պիտի կրնան մեզի մոռցնել տալ անոնց. բայց մէկ հայր մը ու մայր մը երբէք չեն խաբեր, բնաւ երեսի վրայ չեն թողուր, ամենեւին չեն մոռնար իրենց զաւակը :

Սեր սիրած ուրիշ բաներուն կարուստը կրնայ երբեմն նորոգուիլ : Ասանկ չենք կրնար ըսել մէկ բարի հօր մը ու բարի մօր մը համար :

Երբ անոնք կորսնցընելու թշուառութիւնը կ'ունենանք, չենք կրնար անոնց տեղը լեցընել : Նորէն չափափ գտնանք երբէք անանկ մէկը որ մեզի հետ մեր ծնողացը պէս վարուի :

Ուրեմն սիրենք գորովանօք մեր ծնողքը : Որքան որ անոնք սիրենք, այնքան խելացի ու յարգելի ըլլալու

յոյս կ'ունենանք : Այս սէրը, որն որ
 Աստուած ինքն մեզի սրատուիրեր է .
 շատ զիւրութեամբ կը միանայ առա-
 քինութեան սիրոյն հետ, որովհետեւ
 որչափ որ մեր ծնողքը սիրենք, այն-
 չափ ալ կը ջանանք անոնք գոհ ընե-
 լու . և չ'ենք կրնար անոնք ուրիշ
 կերպով գոհ ընել, բայց միայն բարի
 վարքով :

Սիրենք մեր ծնողքը ինչպէս որ
 են, ու ինչպէս որ Աստուած անոնք
 մեզի տուեր է . սիրենք, չէ թէ մի-
 նակ իրենց անձը, այլ իրենց վիճա-
 կրն ու աստիճանն ալ : Թէ որ մեր
 ծնողքը աղքատ, սննչան և թշուա-
 են, պէտք չէ որ բաղձանք մէկ աւել-
 լի հարուստ սրատուաւոր ու երջանիկ
 բնտանիքի մը մէջ ծնած ըլլալու, ասի-
 կա մէկ ամբա-իշտ և մեղաւարտ զգա-
 ցում մըն է, և նախախնամութեան
 գէժ հայհոյութիւն մը : Մեզ հակա-
 ռակն պէտք է անոնք ալ աւելի սի-
 րենք եթէ կարելի է, որովհետեւ


անոնք մեզի համար և մեր պատճառաւ շատ մեծ նեղութիւններ ու զրկումներ քաշած են. ու նաև անոր համար ալ պիտի տիրենք անոնք, որովհետև մեր սէրը ու մեր բարի վարքը կարելի է որ իրենց վշտացը միակ միութարութիւն մըն են :

Արեմն չը նախանձինք այն տղոցը վրայ՝ որոնց ծնողքը մեր ծնողքէն աւելի երջանիկ ու հարուստ են, աւանակ ընենք որ և ոչ մէկ տղայ մըն ալ իր ծնողացը մենէ աւելի երջանկութիւն ու գոհունակութիւն պատճառէ :



Մ Ի Ռ Թ Ի Լ

Վճառուան իրիկուն մը Միութիւն պատանին իր տնակէն դուրս ելեր էր, և կը պտըտէր լճակի մը քովերը սրուն ջուրերը լուսնին պայծառութիւնը կը ցորացընէին : Այս քաղցր լուսնուկը



լուսաւորուած դաշտին հանդարտու-
թիւնը, իրիկուան գեղեցկութիւնը,
սոխակին սրտաշարժ երգերը քիչ մը
ժամանակ տղուն միտքը դուարձալի
կերպով մը յամիշտակեցին :

Այսքը նորէն եկաւ կանանչ բարու-
նակներով զարդարուած կամարին տա-
կը, որն որ իր բնակարանին գրանը
շուք կու տար : Հոն տեղ գտաւ իր
ծերունի հայրը, որ դալարին վրայ
պառկած խաղաղ կը ննջէր :

Տղան սիրտը ելլելով կանկ կ'առնէ
ու կը նկատէ իր հայրը, դիտելու ա-
տենը սրտին մէջ բերկրալից զգացում
մը կ'իմանար : Աչքը անկած հաստատ
կերպով վրան կը նայէր, միայն երբեմն
երկինքը կը նայէր տերեւներուն մէ-
ջէն, ու իր աչքերէն սիրոյ և ուրախու-
թեան արտասուքներ կը վազէին, ու
կ'ըսէր. « Ո՛վ դուն, որ Աստուծմէ
ետքը ամենէն շատ կը սրատուեմ, ո՛վ
իմ հայրս, սրճափ անուշիկ կը հանգչիս,
արդար մարդուն քունը ի՞նչպէս խա-

ղաղ է : Անտարակոյս , այս իրիկուն ,
քու աղօթքդ Աստուծոյ մատուցանե-
լու համար տունէն դուրս ելած պիտի
ըլլաս , և քու աչքերդ կամաց մը գոց-
ուած պիտի ըլլան » :

« Անտարակոյս , ինձի համար ալ ա-
ղօթք ըրեր ես , ս՛հ ո՞րքան երջանիկ եմ ,
Աստուած կը լսէ քու աղօթքդ : Թէ որ
մեր դաշտերը առատ հունտերով կը
ծածկուին , թէ որ մեր մարգագետին-
ները բազմաթիւ խաշինք կը սնուցա-
նեն , անոր համար է որ Աստուած քու
առաքինութեանդ համար մեզի բոլոր-
նիս ալ կ'օրհնէ » :

« Արքոր իմին քու ճերութեանդ
վրայ ունեցած խնամքներէս շարժած ,
ուրախութեան արտասուքներ կը թա-
փես , ու աչքերդ երկինքը վերցուցած
Աստուծոյ օրհնութիւնը իմ գլխուս
վրայ կը կանչես , ս՛հ , ի՞նչ երջանկու-
թեամբ սիրտս կը բաբախի » :

« Ի՞նչպէս կը ժպտիս քունիդ մէջ
տեղը , ս՛հ , անտարակոյս քու միշտ

ըրած բարի գործերէդ մէկուն վրայ
երազ կը տեսնես . . : Բայց քու հասա-
կաւդ մարդուն կարելի է որ վտան-
գաւոր ըլլայ ցողին իջնալուն և գիշե-
րուան զով հովուն վիշելուն ատենը
բաց տեղ քնանալը ։

Աս խօսքերը ըսելով, պագաւ անոր
ճակատը, կամաց մը արթնցրնելու հա-
մար, ու տուն տարաւ որ իր ծերունի
հայրը աւելի հանգիստ ու անոյշ քուն
մը քնանայ ։

ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԿԻՒՂ.

ՀԼՈՒԹԻՒՆ ՈՒ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Որովհետև մեր ծնողքը կը սիրենք,
պէտք է որ զգուշանանք անոնց անհա-
ճոյ ըլլալէն և նեղութիւն տալէն,
այսինքն պէտք է որ անոնցմէ վախ-
նանք ։

Մեր ծնողքէն վախնալն է մեծ ջան-

քով ան բաներէն փախչիլ որոնք կրնան անոնց տժգոհութիւն մը պատճառել, ու այնպէս կանոնաւորել մեր գործերն ու խօսքերը որ միշտ անոնց հաճելի ըլլանք :

Սակայն տղուն վախը գերիի վախ չէ : Գերին կը վախնայ իր տիրոջը պատիժէն, բայց տղան իր հօրը և մօրը զգալի տժգոհութենէն կը զարհուրի :

Ահա այսպէս պիտի վախնանք մեր ծնողքէն, այս երկիւղը չէ թէ միայն կը միաբանի կատարելապէս սիրոյ և գորովանաց հետ, հապա անոնցմէ անբաժանելի է, որովհետեւ ո՛վ որ անկեղծաբար կը սիրէ իր ծնողքը, կը կը դողայ որ անոնք չը տրտմեցնէ : Թէ որ մեր ծնողքը երբեմն մեր վրայ չափազանց ներողամտութիւն ունենան, պէտքը չէ որ երես ելլենք. և թէ որ միշտ պատրաստ են մեր յանցանքները ներելու, պէտքը չէ որ անոնցմէ վախնալէն դադրինք :

Որովհետեւ այս չափազանց ներու
զամտութիւնը՝ որ իրենց ամենամեծ
բարեսրտութենէն առաջ կուգայ ,
սէտք է ընդ հակառակն մեղի համար
նոր գրգիռ մը ըլլայ զգուշանալու ան
բաներէն , որոնք կրնան անոնց նեղու-
թիւն պատճառել :

Ուրեմն սէտք է միշտ հնազանդ
ըլլալ :

Հոր ու մօր հնազանդ ըլլալը , ա-
նոնց կամացը համեմատ վարուիլն է ,
չէ թէ միայն անտրտունջ , այլ և փու-
թով և սիրով :

Տղան պարտաւոր է ընդունիլ
քաղցր ու երկիւղած հնազանդու-
թեամբ՝ ինչ որ ծնողքը իրեն կուտան ,
այսինքն խրատ , յորդորանք , ազգարա-
րութիւն , յանդիմանութիւն , կշտամ-
բանք ու պատիժ :

Որովհետեւ ծնողաց իրենց տղուն
վրայ բանեցուցած խստութիւնը ա-
նոր վրայ ունեցած սիրոյն ապացոյցն
է . անոնք զինքը աղէկ ճամբու մէջ

առաջնորդելու պարտաւորութիւնը
ունին, և ասիկայ իրենց իրաւունքն
ու պարտքն է: Այս պարտականու-
թիւնը՝ անոնց վրայ դրած են բնու-
թիւնը, կրօնքն ու հայրենիքը, ուրեմն
իրաւացի է որ տղայ մը հնազանդի
անխափր անոնց կամացը: Պէտք է
ընդունիլ հեզ ոգւով այն յանդիմա-
նութիւնները, պէտքը չէ երբէք պա-
տասխանել խիստ կերպով, չեմ ըսեր
թէ հպարտութեամբ ու յանդգնու-
թեամբ, որովհետեւ յայտնի է որ իր
հօրը կամ իր մօրը ինքզինքը ամբար-
տաւան կամ յանդուգն ցուցնող ար-
զան՝ խորին անարգանաց և խիստ պա-
տիժներու արժանի էակ մըն է:

Ուրեմն պէտքը չէ ուրիշ կերպով
պատասխանել այն յանդիմանութիւն-
ներուն, բայց եթէ ալ անոնց վերստին
արժանի չ'ըլլալու անկեղծ խոստմուն-
քով մը:

Այս մասին պէտք է միտքը դնել
հասաատ առաջադրութիւն մը, և

Ջանալ զայն պահել: Գէշութեան վըրայօք խօսած ատենը՝ «Այլ անկիայ չպիտի գործեմ» ըսելը բաւական չէ, պէտք է անգամ մ'ալ ան բանը չգործել: Օնողք երբեմն կը հարկադրուին տղաքնին պատժելու, և այն ալ միշտ անոր աղէկութեանը համար, որ իր վրայ զգացած սէրերնուն աղղկցութիւնն է: Թէ որ ամեն կարելի եղած հնարքը չգործածեն անոր պակասութիւններն ուղղելու համար, ըսել է թէ պէտք եղածին չափ չ'են սիրեր զինքը:

Ան տղան՝ որ իր ծնողքէն պատիժ կ'ընդունի, պէտքը չէ որ պատիժէն փախուսա տալու ջանայ, պէտքը չէ նաեւ որ մտքէն անգամ անցնի աս սրտաճառաւ իրեն ծնողացը դէմ բարկանալ մը. ու անոնց սիրոյն վրայ կապկածներ ունենալուն տեղը, այն պատիժը իրենց սիրոյն մէկ նոր ապացոյց մը համարելու է, հնազանդութեամբ ընդունելու և ալ պատ-

Ժոյ արժանի չըլլալու հաստատ առաջադրութեամբ :

Տղան պէտք է որ տրտմի քաշած պատժոյն վրայօք . բայց չէ թէ իր զըրկումէն կամ պատիժէն քաշած ցաւին պատճառաւ , հասպա պէտք է տրտմիլ իր ծնողացը պատճառած տժգոհութեանը և վշտին համար , որ կ'զգան զինքը պատժելու բռնադատուած ատեննին :

Ամեն կերպով տղայ մը ջանալու է այս վիշտէն անոնք խնայելու . և երբոր դժբաղդաբար չյաջողի , և իրեն աղէկութեանը համար զինքը պատժելու դառն պաշտօնը յանձն առած ըլլան , պէտք է որ անոնց շնորհակալ ըլլայ իբր թէ նոր բարերարութեան մը համար :

Տղայ մը որ իր ծնողքէն կը վախնայ և անոնց կը հնազանդի , միշտ անոնց հըլու է . այսինքն՝ կ'ընէ ինչ որ ծնողքը իրեն կը հրամայեն , և անոնց արգելած բաներէն հեռու կը կենայ :

ՂՉԴԻԸ հնազանդելը բաւական չէ , հասլա պէտք է ինքնայօժար հնազանդել , այսինքն պէտքը չէ ակամայ հնազանդել ճնողաց պատուէրներուն , հասլա պէտք է անոնք բարի , արդար և իմաստուն ճանչնալ , և հաճութեամբ անոնց հետեւել : Արովհետեւ մեր ծընողքը , հրամաններ ու արգելմունքներ ըրած ժամանակին , միշտ մեզի համար ունեցած սէրէն ու մեր ճշմարիտ օգուտէն դրդեալ կ'ընեն : Եւ որովհետեւ մեր ճնողացը հնազանդելը մեզի գոհունականութեան պատճառ պէտք է ըլլալ , զայն յայտնելու եիք արագութեամբ , սիրով անոնց հրամանք կատարելով :

Տղայ մը որ կամաց կամաց կը կատարէ իրեն տրուած պատուէրները , ու անոնք երկու երեք անգամ կրրկնել կու տայ , և իրեն հրամայուածները կատարելու ատենը տհաճութիւն մը կը ցուցընէ , շատ անհաճոյ էակ մըն է , կրնայ մարդ նաեւ կատարել

կածիլ անանկ տղուն աղէկ սիրտ ունե-
նալուն վրայ :

Հնազանդութիւնը պէտք է կա-
տարեալ ըլլալ, այսինքն հնազանդիլ իր
ծնողացը թեթեւ բաներու մէջ ալ,
կարեւոր բաներու մէջ ալ :

Վասն զի, ճիշդ խօսելու համար,
չկայ բնաւ թեթեւ անհնազանդու-
թիւն մը : Անհնազանդութիւնը ըստ
ինքեան այնչափ մեծ յանցանք մըն է,
որ եթէ դիտմամբ եղած է, միշտ
պատժոյ արժանի է, թէ և պատճառը
շատ կարեւոր չ'ըլլայ, ներելի այն ժա-
մանակը միայն կրնայ ըլլալ, երբ որ
մոռնալէ կամ անուշադրութենէ ա-
ռաջ եկած ըլլայ : Բայց արդէն իսկ
ուշադիր չ'ըլլալն ու մոռնալը մեծ
յանցանք մըն է, և ջանալու ենք որ
ինքզինքնիստ աս բաներէն ազատ պա-
հենք :

Վասն զի անհնազանդութիւնը մէկ
տղու մը համար շատ աղետալի հե-
տեւանքներ կրնայ ունենալ : Տղայ մը

չկրնար բանի մը վրայով դատաստան ընել, չգիտէ աղէկն ու գէշը, օգտաւ կարն ու վնասակարը. չկրնար նախա տեսել իր գործքերուն հետեւանքները : Իր ծնողքը, ընդ հակառակն խոհե մուծիւն ու խելք ունին, գիտեն ինչ որ կրնայ իրեն օգտակար կամ վնասա կար ըլլալ, թէ նոյն վայրկենին և թէ ետքը : Անոր ըրածէն առաջ գալիք աղէկ կամ գէշ հետեւանքները կը ճանչ նան :

Աւրեմն անոնք պիտի ուղղեն միշտ զինքը, ինքն ալ անխտիր և առանց մեկնուծիւն հարցընելու՝ անոնց հրա մանին պիտի հնազանդի : Անոնք պար տաւորուծիւն չ'ունին իրեն մեկնու թիւն տալու, մանաւանդ որ ինքն ալ կարելի է թէ ան մեկնուծիւնը չհաս կրնայ :

Ամեն անգամ որ ծնողք բան մը կը հրամայեն կամ կ'արգիլեն իրենց տը ղուն, անոր աղէկուծեանը համար է :

Պէտք է համոզուի թէ այն բանը

որ իրեն կ'արգելեն, միշտ գէշ է, թէ
 և չգիտնայ թէ ինչու գէշ է. ու
 պէտք է անկէց հրաժարիլ կրօնական
 փոյթով մը : Այն անանկ տղաք, որ
 առանց իրենց տրուած պատուէրնե-
 րուն ճշգիւ անհնազանդ գանուելու,
 խորամանկութիւններ կը հնարեն ա-
 նոնցմէ ազատ ըլլալու համար :

Ասոր կ'ըսեն խուսափիլ մէկ պա-
 տուէրէ մը կամ արգելմունքէ մը :
 Աղէկ զգուշանանք այս անարժան խո-
 րամանկութիւններէն : Ասոնք տղու մը
 կրնան սովորեցընել խաբեբայութիւն
 ու կեղծաւորութիւն, որոնք ատելի
 մտլութիւններ են :

Հնազանդինք միշտ անկեղծու-
 թեամբ, կատարելապէս և ուրախու-
 թեամբ : Ասանկով մեր խիղճը միշտ
 հանդարտ կ'ըլլայ, կ'ազատինք այն ան-
 համար թշուառութիւններէն որոնք
 անշուշտ անհնազանդութիւնը իր հե-
 տը կը բերէ :



Եւ յիշխոս՝ մէկ որբեւարի կնոջ մը տղան էր . այս կինը կը բնակէր դարբնոցի մը մօտերը . տանը պատուհանները կը նայէին գետի մը վրայ , սակայն գետէն բաւական հեռու էր տունը :

Այս տեղը գետին բոլոր լայնութեանը վրայ մէկ ջրարգել մը կար , որ գետին ջուրերուն մէկ մասը դէպ ՚ի դաշտերը կը դարձնէր , ուր որ ըստ պիտոցից ջուրերը սահանք կ'ըլլային և կը բաժնուէին առուակներու կամ նորէն վար կ'իյնային կարկաչասահ : Այս ջրանցքի նման տեղին բուն իսկ բերանը , գետը մէկ թումբով մը նեղցած , կը դարձնէր դարբնոցին մեծ անխւր :

Այս անխւր եօթը մէթրօ տրամաւ գծի վրայ երէք մէթր լայնութեամբ թիաձեւ թեւերով էր , որ տակէն ջուրը կ'առնէր , և ջուրին ընթացքին ու ժովը կը դառնար :

Անիւը հաստը փայտ մը կը դարձնէր որն որ դարբնոցին շէնքին ներսի կողմը մտած էր, և հոն դառնալով վեր կը վերցընէր ու վար կը ձգէր մէկ մեծ ուռն մը, (որ երկու կամ երէք հարիւր քիլոկրամնոց երկաթի կտոր մըն էր), և գործաւորները կատակի համար վայրի ծիծառն կամ Սառլինէ կ'անուանէին զայն :

Իւրաւ կը հասկցուի որ սա տեղը գետին հոսանքը շատ արագընթաց էր, ու քանի որ անիւին կը մօտենար այնքան կը սաստկանար :

Արդարեւ, ջուրը անիւին ու թումբին վրայ ահագին առատութեամբ ու մեծ շառաչիւնով մը կը դահալիժէր, և հեռուն կը թռցունէր փրփուրի յորձանքները :

Այս ջրանցքին մօտն էր Ամիլիոսի բնակած տունը : Ամիլիոս մեծ սրակասութիւն մ'ուներ որ հնազանդ տղայ չէր :

Կը սիրէր գորովանօք իր մայրը, ու

անոր քովն եղած ժամանակը բնաւ
տժգոհու թեան առիթ չէր տար, բայց
ճորմէն բաւական չէր վախնար, և երբ
որ անոր աչքէն կը հեռանար, բնաւ
չէր զգուշանար որ յանդիմանութիւն
լսելու բան չ'ընէ:

Ուստի բնաւ դասարանը չէր աշխա-
տեր, ու տասնումէկ տարուան եղած
էր, առանց ուրիշ բան մը գիտնալու,
բայց միայն մէկ քանի գիրեր իրարու
քով բերել ու կապել:

Իստի ատենէն դուրս, կ'երթար
կը գանէր անխելք ու զեղխ աղաք, ո-
րոնց հետ անսնուելը մայրը արգելէր
էր իրեն:

Օ ինքը աս գէշ բանէն ետ կեցը-
նելու համար, այս բարի մայրը ինքը
զինքը դժուար պաշտօնի մը տակ դը-
րաւ, ամեն օր մինչև դպրոցին դուռը
կը տանէր, և դասը լմեցուցած ատենը
անձամբ կ'երթար անիկայ առնելու:

Հինգշաբթի օրը, մայրը իրաւ
միտքը դրեր էր անիկա տունը պահե-

ըու, բայց Եմիլիոս կու ըար, կը տառապէր, և կը խոստանար շնորհքով վարվելու թէ որ մայրը թող տար որ դուրս ելլէ :

Մայրը հրաման տուաւ որ հինգշաբթի օրը երթայ ու մինակ զբօսնու, բայց այն պայմանաւ որ չպիտի մերձենար ջրանցքին, և չպիտի դպչէր մէկ ուղտիկ նաւակի մը որ ծովեզերքը կապուած էր :

Եմիլիոս մօրը խոստացաւ ըսածին պէս վարուիլ ու անկէ ետեւ երկու հինգշաբթի հնազանդեցաւ, և զբօսանք ըրաւ պարկեշտ և կրթեալ սղոյ հետ, և գետին չմօտեցաւ :

Բայց երրորդ հինգշաբթին (այն օրը որ մայրը դուրս ելած էր անհրաժեշտ գործի մը համար) մտածեց թէ կրնայ երթալ, զբօսնուլ ջուրին եզերքը առանց իր մօրը գիտութեանը :

Սակայն մայրը իր գործքերը ընկերներէն ետքը տուն կը մտնէ, գալուն պէս առաջին գործը կ'ըլլայ դէպ ՚ի

գետը նայիլ, վասն զի գիտնալով իր
տղուն անհնազանդութեան հակամի-
տութիւնը, միշտ մէկ անհանգստու-
թեամբ մը սիրտը կը տագնապէր :

Կը տեսնէ տղայ մը նաւակի մը
մէջ որ կը ջանար գետէն մինակ անց-
նելու :

« Արձնք են, ըսաւ, արդեօք այն
ծնողքը որ թոյլ տուեր են տղու մը
ասանկ մէկ շատ վտանգաւոր զուար-
ճութեան մը հետեւելու : »

Բայց ի՞նչ եղաւ կինը երբոր կէս
մը ճանչցաւ որ այն իր Ամիլիոսն է,
ան Ամիլիոսը՝ որուն ապստրբէր էր
բնաւ ջրին քով չմտենալ, ան Ամի-
լիոսը՝ որ բոլոր իր կենացը մէջ թի-
չէր քաշած :

Իսկ և իսկ ինքն էր այն թշուա-
ռականը : Քակեր էր ան շղթան որ
նաւակը ծովուն եզերքը հաստատուն
կը բռնէր, վերջը վտանգը չգիտնալով
և կարծելով որ դիւրութեամբ նաւա-
կը սլիտի վարէ, ինքզինքը ջուրին հո-

տանքին յանձնած բարձր ձայնով կ'երգէր , չտեսնելով այն անգունդը որ զինքը պիտի կրլէր , չըլտելով նաեւ անիւին թնդիւնը ու ալիքներուն շառաչիւնը որ կը զարնուէին թումբին վրայ :

Աս տեսնելով մայրը՝ կը վազէ և ազաղակ մը կ'արձակէ :

Աս ազաղակը անանկ ահագին եղաւ , որ մուրձերուն բաղխումը չ'արգիլեցին դարբնոցին գործաւորները զայն լսելու , շտապաւ իրենց գործարանէն դուրս նետուեցան : Մայրի՛նչ օգնու թիւն կրնային ընել անհնազանդ տղուն : Հոսանքը արդէն զայն արագու թեամբ կը տանէր դէպ ի անիւր :

Սակայն ինքը միշտ կ'երգէր , կամսոց կամսոց այն աղետալի տեղին մօտենալով , բայց երբ լսեց իր մօրը ազաղակները , երբ տեսաւ բոլոր գործաւորները զարհուրած , որ հաղիւ կրնային արգիլել խեղճ կնկանը իր

տղուն քով նետուիլը, իմացաւ իրեն
սպառնացող վտանգը, սոսկումով նա
յեցաւ ահռելի անիւին, տարածեց իր
բազուկները, զրկեց մօրը իր վերջին
համբոյրը, ձեռքերը կուրծքը՝ ծունկի
վրայ եկաւ, և իր հոգին յանձնեց Աս-
տուծոյ : Ասանկ իր անհնազանդութեա-
նը զոհ եղաւ Ամիլիոս :



ՈՒՍՄԱՆ ՅՕԺԱՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ԵՒ ԴՊՐՈՑԻ ՄԷՋ ՎԱՐՔ

Սեր ծնողացն համար ունեցած
հնազանդութիւնն իս կը պարտաւորէ
զմեզ եռանդով աշխատիլ ու սովորիլ :

Սեր ծնողքը մեզի դպրոց կը խոր-
կեն, երբոր մենք կրթութիւն մը ըն-
դունելու կարող կ'ըլլանք . աս մեր ա-
ղէկութեանը համար է, որովհետեւ
պատանի մը մեր օրերը առանց կրթու-
թեան՝ չկրնար յաջողակ ըլլալ և ոչ մէկ
բանի մը :

Մինակ կրթութիւնը կրնայ մեզի մեր բոլոր պարտաւորութիւնները կատարել ու մեր գործքերը աղէկ մը վարել տալ. կրթութիւնը ձանձրութեան դէմ ապահով հնարք մը կը պատրաստէ, կրթութիւնը մեզի կը ճարէ օգտակար ու հաճոյական կերպով մեր պարապ ատենները լեցընելու միջոցը, և մեզի կը պահպանէ ապագային համար այն գէշ սովորութիւններէն, որոնց մէջ պիտի կրնար մեզի ձգել տօնի օրերուն դատարկութիւնը : Արթութիւնը այս օրուան օրս գրեթէ անանկ հարկաւոր է մարդուս, ինչպէս որ զինքը սնուցանող կերակուրները ու իր շնչած օդը :

Մեզի այն բարիքները վայելել տալու համար է, որ մեր ծնողքը մեզի դպրոց կը խրկեն :

Պէտք է որ սրտանց ուղեւորով ու սիրով դպրոց երթանք, որովհետեւ կրթութեան օգուտները հասկընալու դեռ կարող չ'եղող սղան ալ գիտէ թէ

պարտաւոր է իր ծնողացը կամքը կատարելու : Ասիկա բաւական պիտի ըլլայ դպրոցը սիրել տալու իրեն :

Ի՞նչ պէտք է որ ընէ տղայ մը թէ որ կ'ուզէ դպրոցին մէջ իր ծնողաց դիտաւորութեանը յարմար վարուիլ : Ահաւասիկ . “ Տղան ամենէն կարճ ճամբայէն դպրոց երթալու է առանց ետ դառնալու , առանց ճամբան դքօսնելու : Պէտք է որ հոն հասնի տահմանուած ժամէն քիչ մը առաջ , իր անձը և իր զգեստները պէտք է որ բոլորովին մաքուր ըլլան : Բասարանը պիտի մտնէ համեստ ու հանդարտ կերպով առանց վազելու , առանց արտորալու պիտի երթայ իր տեղը նստի իր ընկերներէն մէկը չ'չփոթելու պայմանաւ : Բասին ժամանակը միայն իր ուսմանը պիտի զբաղի , և ուրիշ բանի մը վրայ չպիտի մտածէ : Մտադրութեամբ պիտի լսէ ուսուցչին ըսածը , և պիտի ջանայ անկէց իրեն օգուտ քաղելու : Իրեն վրայ դրուած սխալքը յօժարու-

Թեամբ պիտի կատարէ և իր դասերը
 ակտորժակով ու եռանդով պիտի սովորի :

Չպիտի խնդայ, չպիտի խօսի իր
 բնկերներուն հետ, չպիտի համարձակի
 մէկուն հետ խաղալու ու խեղկատու
 կելու : Աւսուցիչը իրեն նայի չը նայի՝
 միշտ հանդարտ պիտի կենայ :

Երբոր դասը լըմննայ, իր ծնողացը
 տունը պիտի դառնայ առանց խոտո-
 րելու ան ճամբէն, ուսկից իրեն հրա-
 մայուած է երթալ դալ :

Իրաւ՝ աղէկ աշակերտը համեստ
 կ'ըլլայ, բայց մէկ պարկեշտ համարձա-
 կութիւն մըն ալ կ'ունենայ, թէ որ
 բան մը չ'հասկընայ, խօսելու հրաման
 կ'ուզէ, և երբոր այս հրամանը անոր
 տրուի, կ'աղաչէ դասատուին իրեն չը
 հասկցած բանը բացատրել :

Աչ հպարտութիւն կ'ունենայ և ոչ
 անապարծութիւն, վասն զի գիտէ որ
 անոնք ատելի մոլութիւններ են, չծի-
 ճաղիր երբէք այն աշակերտներուն վրայ
 որ իրմէն քիչ յաջողակ են, ու միտքէն

Հանցընէր անոնցմէ վեր ըլլալը, չխօսիր
 երբէք իր ստացած յաջողակութիւն
 ներուէն վրայօք: Նախանձաւորութիւն
 սենի, և կ'ուզէ ուրիշներուն նման և
 անոնցմէ ալ աղէկ ընել, բայց նախանձ
 չէ. երբոր կը տեսնէ որ իր ընկերները
 զինքը կ'անցնին, նախանձութիւն մը
 չզգար, հապա եռանդն ու քաջու-
 թիւնը կ'աւելցընէ, որ անոնց հաւա-
 սարելու կարող ըլլայ, կամ նաև անոնք
 անցնի:

Բոլորովին բարեւէր է իր ամէն ըն-
 կերներուն հետ, և սրատուաւոր ու
 ներելի եղած բաներուն մէջ անանց
 զուարճութիւն մը պատճառելու սրա-
 տեհ ժամանակը ձեռքէն չիախտընէր:
 Չխօսիր երբէք դասէն ետքը իր ընկեր-
 ներուն գործած յանցանքներուն և ա-
 նոնց դպրոցին մէջ կրած յանդիմանու-
 թիւններուն և սրատիճներուն վրայով:

Չխօսիր բնաւ դասին ժամանակը
 այն բաներուն վրայօք որ ընկերները
 դպրոցէն դուրսը ըրած են, անանց հա-

մար բնաւ գէշ շխտիր . ամենեւին աւ
նոնց գէմ քսութիւնն չ'ընէր : Բարբ
վէճերէն ու ծեծկուելէն կը փախչի .
միայն թէ երբոր տեսնէ տկար մը զօ
րաւորէ մը չարչարուած , ան ատեն
տկարը պաշտպանելու համար իր ուժը
կը գործածէ : Ամենուն հետ բարեկա
մութեամբ կը խօսի սէտք եղած ժա
մանակը , բայց մասնաւոր սէք մը մի
միայն խելացիներուն հետ կը կատէ :

Մեծ ջանքով կը փախչի չէ թէ միայն
գէշերուն՝ այլ և անխելքներուն ընկե
րութենէն , վասն զի անմտադրութիւնն
ու անզգամութիւնը կրնան առաջնոր
դել անհնազանդութեան ու անկէ ա
ռաջ եկած բարբ մտրութիւններուն :

Ամենուն բարի օրինակ կ'ըլլայ , և
մանաւանդ իր բարեկամներուն , անոնց
հետ անանկ բաներ կը խօսի և անանկ
բաներ կ'ընէ որ կարենան պատմուիլ
անոնց և իրեն ճնողացը առջին :

Ար մեծարէ և կը սիրէ իր ուսուցի
չը , կ'ընդունի հեզ սրտով անոր հրա

մաններն ու խրատները, անոր խնամքներուն երախտագէտ է :

Արբէք չորարնջար անոր խիտ կերպով վարուելուն համար, բնաւ չկասկածիր անոր անաչառութեանը ու արդարութեանը վրայ, ու թէ որ լսէ թէ ուսուցչին համար թշնամութեամբ կը խօսին, զաւկի ջանքով ու բարեկամի եռանդով անիկա կը պաշտպանէ :

Այսպէս վարուելով սղան օգուտ կը քաղէ իր ուսուցչին դասերէն, ու իր ճնողացը վառքը և ուրախութիւնը կ'ըլլայ :

ՎԱԼԱՆ ԹԻՆ

Ահհնար է առանց օգուտ քաղելու կարդալ այն երիտասարդ հովիւին պատմութիւնը, որ իր ուսման վրայ ունեցած սիրոյն զօրութեամբը շատ խմաստուն եղաւ :

Վարանթէն Դամուէյ-Տիւվալ՝ Շամ

բանիայի գեղէն աղքատ մէկ գործաւորի մը տղան էր, և իրեն տասներկու տարուան հասակին մէջ իր հայրը կորսնցընելու թշուառութիւնը ունեցաւ :

Իր մայրը, թէպէտ և չափազանց աղքատութեան մէջ էր, բայց անիկա դպրոց խրկեց, ու ան ատենէն տղան ուսման համը առաւ : Բայց գիւղին մէջ ան ատեն դպրոցը միայն ձմեռուան երեք ամիսը բաց կը կենար : Ալալանթէն սյս երեք ամիսը իր մօրը տունը կ'անցընէր. և անդադար իր դասին կը հետեւէր, տարիին միւս բոլոր մնացած մասը երկրագործի մը քով կը կենար, որուն խաշինքը դաշտերը կը տունէր, կ'արածէր :

Ալալանթէն իմաստուն միանգամայն և փութաջան աշակերտ մըն էր, և քարնան գեղեցիկ եղանակին մէջ իր գիրքերուն հետ կ'զբաղէր որքան որ իրեն կարելի կ'ըլլար, որպէս զի չմտնայ ձմեռուան երեք ամիսը սովորած

ներքը : Տասն և չորս տարուան եղած
ատենը , կատարելապէս կարդալ գի-
տէր , բաւական գրել , ու թուանշան
ներքը կը ճանչնար , նաև աղէկ գիտէր
քրիստոնէական վարդապետութիւնը :
Ան ատենը պարտաւորեցու ձգել իր
գեղը , ուր թշուառութիւնը չափա-
զանց էր , և ուր իրեն անկարելի էր իր
ապրուստը ձարել : Այս լացաւ իր
խեղճ մայրը ձգելու ատենը , ու միտքը
դրաւ որ տեղ մը գտնալուն պէս իր
վաստրկածին մեծ մասը անոր խրկէ , և
ետքը միշտ կատարեց այս խորհածը ե-
ւանդով ու ճշգիւ :

Վէպ ՚ի Սուենի կողմը ճանապար-
հորդեց :

Այս ճամբորդութիւնը ձմեռուան
մէջ էր , 1709 թուականին : Այս ձմեռը
չափէն աւելի սաստիկ եղաւ : Արիտա-
սարդ ուղեւորը քանի մը օր ճամբայ
ընելէն ետքը , չկրցաւ դիմանալ ցուր-
տին որ զինքը կ'ընկճէր , ու թշուա-
ռութիւնը կատարեալ ըլլալու համար

ճաղիկ հիւանդութենէն ալ բռնուեցաւ : Քաշած նեղութիւնները անտանելի էին, և մտորած էր ձիւներուն մէջ տեղը անանկ մէկ գաւառի մը մէջ, ուր թշուառութիւնը կը ցամաքեցնէր բոլոր ողորմածութեան աղբիւրները : Շնչասպառ՝ ձիւներուն վրայ իյնալու աստիճանին հասաւ, բայց յիշեց իր մայրը, որուն մէկ հատիկ յոյսն էր, Աստուծոյ ողորմութիւնը օգնութեան կանչեց ու իրեն վրայ նոր քաջալերութիւն մը եկաւ :

Արցածին չափ գրեթէ գետինը քրտվելով մինչեւ ագարակ մը ինկաւ :

Ագարակին վարձաւորը կարեկցութեամբ սիրտը շարժելով շուտով զինքը գէպ 'ի գոմը տարաւ : Հոն անոր ըզգեստները հանեց, պատեց անիկա հին կտաւներով և վարսակի կակուղ յարգով, ու մինչեւ բազուկները ոչխարներուն աղբին մէջը թաղեց տղան, որ տաք մնայ, և ճաղկին դուրս տալուն դիւրութիւն մ'ըլլայ, ետքը խաչակրն-

քեց վրան և թողուց բսելով. « Կսու
ուած ողորմի քեզի խեղճ տղայ, որով
հետև մինակ ինքը կրնայ քեզի օգնել » :

Վարանթէն արդարև ինքզինքը Կսու
ուածոյ յանձնեց, Կսուուած ալ զինքը
երեսի վրայ չձգեց : Աջխարներուն
չունչը ու աղբին տաքու թխնը կամաց
կամաց անոր բժշկուելուն նպատու ե
ղաւ : Աղտրմած վարձակալը, թէպէտ
չատ չքաւոր էր, բայց օրը երկու ան
գամ ջուրի մէջ եփած և միայն քիչ մը ա
ղով համեմուած գարիի ալիւր կը բերէր
անոր : Վարձաւորին չքաւորութիւնը
միայն այսչափին կը ներէր որ տղին ը
նէ : Սակայն ձմեռը երթալով կը սաստ
կանար : Գոմին շրջապատը ընկուղենի
ներով և կաղնիներով լեցուն էր : Գի
շերը շատ անգամ տղան կ'արթննար
որոտման կամ թնդանօթի պէս յան
կարծական ու սաստիկ ձայներէն : Այն
ձառերէն մէկ քանիները սառնաման
եաց սաստիկութեամբը կը խորտակուէին
ու մինչև արմատներնին կը ճեղքուէին :

Երբոր Վալանթէն սկըսեց քիչ մը աղէկնալ, վարձակայը անոր մէկ քանի հացի կտոր բերաւ, որոնք սառուցը այնպէս կարծրացուցեր էր որ հարկ կ'ըլլար անոնք կացինով կտորել: Վիւ ճակին քահանան ձեռք բռնեց, բարի վարձակային հիւանդու թենէ նոր ելող աղին օգնելու համար. և Վալանթէն իր առողջութիւնն ու ուժը նորէն ըստանալով, գնաց մէկ գործ մը վնտուելու, և յանձնառու եղաւ երկրագործի մը քով հովուութիւն ընել, ու կրցածին չափ շարունակեց կարգալը որ սուրածը բնաւ չմոռնայ:

Մտուածային նախախնամութիւնը վերջապէս անիկա անտառներուն մէջ տեղը՝ մէկ առանձին տուն մը առաջ նորդեց Վիւնէվիլէն քիչ հեռու: Մտուունը կը բնակէին չորս բարեպաշտ մարդիկ, որոնք բոլորովին աշխարհէս քաջուած էին, և կ'ապրէին մէկ պզտիկ կալուածի մը բերքովը, որն որ իրենց ձեռքովը կը մշակէին:

Իրենց պէտք էր տղայ մը՝ կովերնին պահպանելու համար : Վալանթէն ներկայացաւ անոնց , անոնք ալ զինքը բարեսրտութեամբ տուներնին ընդունեցին , և անոր խոստացան որ իր մօրը խրկեն վաստակին մեծագոյն մասը : Այն օրէն ետքը Վալանթէն հանգիստ էր իր աղէկ վիճակին համար , և իր մօրը օգտակար ըլլալուն համար ալ երջանիկ էր : Ալ Վալանթէն ուրիշ բան չմտածեց բայց եթէ աղէկ կատարել իրեն տէրերուն համար ունեցած պարտքերը , և ուսման գործածել բոլոր իր պարապ ժամանակները : Աւելի աղէկ գրել սովորելու համար , միտքը դրաւ իր պատուհանէն հանել ապակիի կտոր մը , և անիկա իր օրինակին վրայ դնելով՝ կը գրէր վրան անոր մէջէն տեսնուած գիծերը :

Տանը մէջը համառօտ թուաբանութիւն մը գտաւ , մինակ ու առանց դասատուի չորս գործողութիւնները սովորեցաւ , և ասիկա եղաւ իրեն հա-

մար զբօսանաց ու զուարճութեանց
աղբիւր մը :

Իր տէրերը մէկ քանի աղէկ գիրքեր
ունէին և տեսնելով տղին ուսման ա-
խորժակը, անոր փոխ տուին :

Ընտառներուն մէջ իր կովերուն
հետ քայլ մը չէր առնէր առանց գիրք
մը հետը ունենալու : Եկեղեցւոյն քա-
հանան, ուր որ կ'երթար կիրակի օրե-
րը պատարագ լսելու, աշխարհագրու-
թեան գիրք մը տուաւ անոր, այս ուս-
մունքին այն աստիճան սէր ձգեց, որ
քիչ ատենէն ճանչցաւ երկրիս բոլոր
գաւառները՝ գրեթէ անտառին զանա-
զան անկիւններէն աւելի աղէկ : Իր
կազանդչէքներովը ծախու առած սրբ-
տիկ ափսոսի մէջ երկնագունտի աշխար-
հացոյց մը կար, որուն վրայ նշանակ
ուած էին երկնից զանազան աստղերը
իրենց անուամբն ու մեծութեամբը :
Այս աշխարհացոյցիս օգնութեամբը,
Վալանթէն ուզեց սովելի բոլոր հա-
մաստեղութիւնները : Իսիտ բարձր կաղ-

նիւ մը գազաթը ուռիի ստերէ ու իւրարու մէջ անցած բաղեղներէ բաղկացած հիւսուածք մը շինեց : Վիշերը երբոր երկինքը սարդ կ'ըլլար, այս անսակ մը բոյնին մէջը կը նստէր ու զանազան սատղերը կը նկատէր : Իր ուսման համար ունեցած սէրը յաջողութեամբ պսակեալ, միշտ կ'աւելնար :

Օր մը երբոր ծառի մը տակ նստեր էր, գիրքերով ու աշխարհագրական ցուցակներով շրջապատուած և ուսման մէջ ընկղմած՝ չտեսաւ այն երկու օտարականները, որ իրեն քով մօտեցեր էին և զինքը կը նկատէին հիացմամբ : Ասոնցմէ մէկը շատ երիտասարդ էր, միւսը չափաւոր հասակով. առաջինը Վստէնի ժառանգորդ արքայորդին էր, որ ետքը Վերմանիայի կայսր եղաւ Գրանչիսկոս առաջին անուամբ. միւսն ալ անոր դաստիարակը :

Ասանկ փոքրիկ հովիւ մը այսպէս ղըաղած տեսնելով զարմացած « Ի՞նչ կ'ընես հօս, տղէկ » ըսին անոր :

— « Կրօսանիմ » պատասխանեց Վալանթէն համեստ կերպով մը : — « Ի՞նչ այս գիրքերէն բան մը կը հասկնամ : — « Կը ջանամ հասկնալ » պատասխանեց փոքրիկ հովիւը , մեծարանքով օտքի վերայ ելլելով նոյն միջոցին :

Ինչ ատենը երիտասարդ արքայորդին ու իր դաստիարակը անոր շատ հարցմունքներ ըրին աշխարհագրութեան , պատմութեան ու թուաբանութեան վրայ , ու սքանչացան անոր պատասխաներուն : Իր տէրերէն անոր վրայօք տեղեկութիւն առին , որոնք պատասխանեցին թէ « որչափ որ ուսումնասէր է , այնչափ ալ անուարարոյ ու խելացի է » :

Պալատը դարձածին պէս արքայորդին պատմեց իր հօրը՝ անտառներուն մէջը գտած փոքրիկ հովիւը , որ մինակ իր ջանքովն զարմանալի կըթութիւն մը ստացած էր :

Հրաման խնդրեց այս տղին խնամք տանիլ ու խնայն իր խնդիրքը կատարուեցաւ :

Վալանթին իր բարերարին միջնորդութեամբը Ռօնդ — ա — Սոլսօն ճեմարանը դրուելով՝ արագընթաց յառաջագիմուծիւններ ըրաւ ամեն տեսակ ուսման մէջ, երևելի եղաւ իր գիտութեամբը : Արքայորդին որ ետքը կայսր եղաւ, անիկա իրեն գրապետը անուանեց :

Օրբաւոր և հարուստ եղած ժամանակն ալ յամբռէյ—Տիւվալ միշտ պարզ, և համեստ կանոնաւոր վարքի տէր եղաւ, ինչպէս որ էր կովերը անտառներուն մէջ պահպանած ատենը : Աւսմունքէ ու բարերարութենէ զաս ուրիշ զուարճութիւն չճանչցաւ :

Նորէն շինել տուաւ իր ճնողացը տունը և իր մօրը երջանիկ բարեկեցութիւն մը վայելել տուաւ, ու երբոր մայրը մեռաւ, այն տունը գեղին ընծայ ըրաւ, որպէս զի այն տեղի դաստիարակը բնակի ու հոն դպրոց հաստատուի :

Ծ Ն Ո Ղ Ա Յ Վ Ր Ա Յ Պ Ա Ր Տ Ք Ե Ղ Ա Ծ
Վ Ս Տ Ա Հ Ո Ի Թ Ի Ի Ն

Մինակ կատարեալ հնազանդու-
թիւն մը պէտք չէ որ ունենանք մեր
ճնողացը, հասրա անոնց վրայ կատա-
րեալ վստահութիւն մը ունենալու ալ
պարտաւոր ենք :

Աստուած՝ որ մեր վրայ հսկելու ծա-
նրք հոգը անոնց վրայ դրեր է, մեզի
առաջնորդելու համար հարկաւոր ե-
ղած մտաւորական լուսաւորութիւն
ներն ալ անոնց տուեր է :

Քանի որ մենք տղայ ենք, անձամբ
ինքզինքնիս կառավարելու անկարող ենք,
անոնք մեզ պիտի վարեն : Հօրմէ ու
մօրմէ զատ մէկը չկայ որ մեզի վայե-
լու չխրատներ տալու համար բաւական
գութ ունենայ վրանիս : Օ՛նողաց վը-
րայէն վստահութիւնը վերցընելը՝ ար-
դու մը համար ամենամեծ թշուառու-
թիւն մըն է :

Անվստահութիւնը կրնայ տղուն սը-

տախօսութիւնն սովրեցունել, և սրտախօսութիւնը ատելի մտութիւնն մըն է, որ տղան ուրիշ մտութիւններու մէջ կը ձգէ : Սուտ խօսիլը որ և իցէ մարդու, միշտ մեծ գէշութիւնն մըն է, բայց իր հօրն ու մօրը սուտ խօսելը գրեթէ սրբապղծութիւնն մըն է :

Անոնց կեղծաւորութիւնն ընելը և անոնցմէ ճշմարիտը սլահելը, թէպէտ և սուտ չըսելու ջանք ընելով ալ ըլլայ, միշտ աղետալի ու դատապարտելի բանն մըն է, որովհետև մեր ծնողքը անանկ անհատնում բաներ գիտեն, որ մենք չենք գիտեր, կը տեսնեն այն վտանգները որոնց մէջ իյնալու վախը կ'ունենանք, անոնք մինակ անոնցմէ հեռու կենալը մեզի սովրեցրնել կրնան : Աւրեմն պէտք չէ որ բան մը մեր ծնողքէն գաղտուկ սլահենք : Ասով միայն անմեղութեան մէջ կրնանք յարատեւել և միշտ աղէկ վարուց մէջ հաստատ մնալ :

Թէ որ մէկը խրատէ տղայ մը, ա

ուանց իր ճնողայր գխառ թեանը բան մը ընելու համար, աղան պէտք է որ ստեղծով հերքէ այն խրատը :

Թէ որ մէկը աղու մը ըսէ անանկ խօսքեր ու անոր ապսպրէ որ իր հօրն ու մօրը չ'ըսէ, աղան պէտք է որ ան մարդը իրեն կորուստը խորհող թշնամին կարծէ, որովհետև ինչո՞ւ համար իր ծրնողայր չ'ըսէ անանկ բան մը, թէ որ այն բանը դատաստարտելի ու վտանգաւոր չէ :

Վերջապէս, բաւական չէ մեր ծրնողայր մեր գործքերուն ու մեր խորհուրդներուն վրայօք անկեղծ համար տալը, հատա պէտք է որ մտիկ ընենք անոնց սովրեցուցած բաներուն՝ յարգական հնազանդութեամբ, անոնց բարի օրինակներէն օգուտ քաղենք, և բոլոր մեր կենացը մէջ հեռու ինք այն խրատներուն, որ մեզի կուտան մեր տղայութեան ատենը :

Որովհետև մեր անոնց տալիք մեծարանաց և վստահութեան ամենէն ապահով նշանը անոնց սովրեցուցածնէ :

բուն հետեիին է մեղի համար, այսինքն անանկ շարժիլ ամեն բանի մէջ, որ բռ լորովին Նստուծոյ հաճելի և ազնիւ մարդոց յարգանացը արժանի ըլլանք :

Հայր մը ու մայր մը որ կը տեսնեն իրենց տղուն բարի վարքը, իբր թէ երկրիս վրայ արքայութիւնը կը գտնեն, անոնց տրուած գովեստները կզմայլեցրնեն իրենց ականջները, և անոնց աւաբինու թիւնները իրենց սրտին ուրախութիւն կը պատճառեն :

Սեր ձեռքն է անոնց այս երջանկութիւնը պատրաստել : Քայլեր ուրեմն հաստատութեամբ և բաշու թեամբ՝ բարութեան ճամբուն մէջ, յաղթենք տըղայական թեթեւութեան ու երիտասարդութեան կիրքերուն, և միշտ հաւատարիմ ըլլանք պարտուց սուրբ օրէնքին :

Իսպց սակայն որչափ որ հաստատ միտքը դրած ըլլայ մէկը, գժուար է որ տղայութեան հասակին մէջը ամեն սըխալմունքներէն անձը պահպանէ :

Աւրեմն թէ որ տղայ մը դժբաղդաբար սխալմուկնքի մը մէջ իյնայ, ի՞նչ ընելու է. ան բանին վրայօք զղջալ և անոր դարման ընել պէտք է: Յանցանքի մը վրայ զղջալը՝ այն յանցանքը գործած ըլլալուն համար սաստիկ ցաւ իմանալ մըն է:

Յանցանքը ջնջելը՝ իմացած զղջումը յայտնել, անոր ներումը ստանալ, ու որչափ որ կարելի է, անոր հետեւանքները անհետ ընել է: Օղջումը պէտք է շուտ ըլլայ, և մէկ վայրկեան մը անգամ խղճմտանքին աղաղակին դէմ կենալու չէ:

Օղջումը պէտք է որ անկեղծ ըլլայ. մէկ ընդունայն ու անդօք ցաւու մը վերայ չկայանայ, հապա հոգին խորին կերպով մը շարժելու է:

Օղջումը պէտք է որ տեւողական ըլլայ, թէ որ շուտ մը նուազի, մարդօշառ դիւրութեամբ նոյն կամ ուրիշ յանցանքի մը մէջ կ'իյնայ:

Երբոր զղջումը շուտ, անկեղծ ու

տեւողական է, իսկոյն դարման կը տար-
ուի :

Հպարտութիւնը բնաւ արդելք ը-
լալու չէ այս դարմանին դէմ : Հոգւոյ
աղնուութիւն մըն է համարձակ ճանչ-
նալ իր սրահատութիւնները և անոնք
համբերութեամբ ապաշխարել : Բայց
անոնց մէջը մնայլ միշտ ամօթ է, շատ ան-
գամ յիմարութիւն և երբեմն մեղք է :

Յանցանքի մը դարման տանելը բա-
ւական չէ, այլ պէտք է նորէն անոր
մէջ իյնալէն հեռու փախչիլ : Արանի-
ան տղուն, որուն յանցանքները քիչ ու-
շուտով դարմանուած են, աւելի երա-
նի անոր, որ իր առաջին տարիներուն
մէջը կատարեալ անմեղութիւնով իր
անձին մոլութիւններէ ու աշխարհա-
կան աղմուկներէ ազատ երիտասար-
դութիւն մը կը պատրաստէ :

ԱԼԵՔՍԻԱՆՈՍ

Փոքրիկ Ալեքսիանուսը իր մայրը կոր-

տընցընելու թշուառութիւնը ունեցեր էր : Իր հայրը , որ ուրիշ տղայ չունէր , առ տղովը կը մտիթարուէր ու երջանիկ կը սեպէր զինքը : Ալեքսիանոս առաքինութեան համար և աշխատութեան սիրովը բարի յարմարութեամբ ծնած ըլլալով , յաջողակ էր ան բաներուն մէջ որ իրեն կը սովորեցընէին :

Իր սրբապ եղած ատենները կը սիրէր առաւել գծագրութեան սրբապիլ , այս արուեստին մէջ շատ ճարտար եղած էր : Անձ հայելիի մը առջև նրատելով , իր համանման սրատկերը շինելու յաջողեցաւ :

Իր հօրը տօնախմբութեան օրը անիկա անոր ընծայ ըրաւ , հայրը այս նուէրին վրայ զուարճանալով , իր սենեակին մէջը կախեց այն սրատկերը : Քրնանալէն առաջ ուրախութեամբ կը նրկատէր իր Ալեքսիանոսին սրատկերը , արթնցած ատենն ալ իր առաջին նայուածքը գէպ ՚ի անոր կ'ուղղէր :

Ալեքսիանոս գժբաղգարար տասն

և ութը տարուան հասակին մէջ սկըսաւ իր վարքը փոխել :

Իր հօրեղբորորդիներէն մէկը , որ իրմէն չորս տարու մեծ և արդէն իր գործքերուն ու հարստութեանը ինքնագլուխ տէր էր , ջանաց զինքը մտըրեցընել իր գէշ խրատներովը և իր վրտանգաւոր օրինակներովը :

Համոզեց զինքը թէ հայրը շատ խիստ է , և ստիպեց որ հօրը հսկողութենէն ազատ մնայ , արգիլուած զբօսանքներուն ծածուկ անձնատուր ըլլալու համար :

Առջի բերանը Ալեքսիանոս դէմ կեցաւ : Սակայն օր մը ապահով ըլլալով թէ իր յանցանքը չպիտի յայտնուէր , անհոգութեամբ թող տուաւ իր անձին գործել մէկ դիմագարծութեան մեղք մը որն որ թեթեւ կը կարծէր : Իայց անհնազանդութեան առարկան որչափ որ փոքր ալ ըլլայ , միշտ ծանր մեղք է :

Իրաւցընէ , երբոր Ալեքսիանոս ըսկըսեց մէկ արգիլուած զուարծութեան

մը անճնատուր ըլլալ՝ ու այն աղետալի
 զուարճութեան համը որ առաւ, շատ
 մօտեցաւ իր կորստեանը : Անդգայի կեր-
 պով մը իր բարի յօժարութիւնները խո-
 տորեցան, իր միտքն անգամ մթնցաւ,
 սկսաւ անանկ յայանապէս չպահել իր
 պարտքերը, որ կարծես թէ բնաւ չէր
 իմանար :

Հայրը, որ ասանկ մէկ փոփոխու-
 թեան մը վիշտով սիրտը կը ճմլուէր,
 ամեն միջոցներ գործածեց որ հեռացը-
 նէ իր թշուառ տղան այն անդունդէն,
 որուն մէջ պիտի գահալիժէր : Երբեմն
 մէկ գորովալից քաղցրութիւն մը գոր-
 ծածեց, երբեմն իմաստուն բռնութիւն
 մը : Ի այց ոչ սաստկութիւնը, ոչ քաղց-
 րութիւնը կրցան աղէկի դարձնել այս
 մոլորեալ հոգին :

Սակայն Ալեքսիանոս երբեմն կ'ամը-
 նար իր յանցանքներէն. ու աղէկ առա-
 ջադրութիւններ կ'ընէր : Հօրը գիբկը
 նետուելով կուլար դառնապէս և կը
 խոստանար աղէկ վարուիլ :

Իսց զղջման մէջ ամուր մնալու հա-
մար հաստատութիւն պէտք է, որնոր
Մէքսիկանոս ամենեւին չունէր :

Շուտով նորէն ունկն կը դնէր իր
նենգաւոր բարեկամին հրապոյրներուն,
և իր խոսամուկները մոռնալով դարձ-
եալ կ'իյնար իր առջի մոլութիւննե-
րուն մէջ :

Վերջապէս հայրը իրաւամբ բար-
կացած և խիստ շատ անհանգիստ ըլլա-
լով, միտքը դրաւ արմատախիչ ընել այն
չարիքը : Միացեր էր որ Մէքսիկանոսը
անհնազանդութեան մէջ ձգողը իր եղ-
բորորդին էր, յանդիմանեց չարաչար այն
խոտորեալ պատանին, իր առջևէն վը-
ռընտեց, արգիլեց անոր՝ որ բնաւ իր
ատենը չմանէ, և Մէքսիկանոսին ալ
խիստ պատիժներ ստառնացաւ, թէ որ
անկէ ետև անոր հետ յարաբերութիւն
մ'ունենայ :

Չար երիտասարդը բարկութեամբ
լցուած միտքը դրաւ վրէժ առնել : Եւ
կաւ գիշեր ատեն, գտաւ Մէքսիկանո-

օր . որնոր իրենն եղած արգելքներունն հակառակ անոր մտիկ ընելու դատաւ պարտելի տկարութիւնը ունեցաւ , ու յորդորեց որ փախչելով աղատի իր հօրը խստութենէն :

Մ. յս առաջարկութիւնը լած ժամանակը առջի բերանը Մ. լեքսիանոս զարհուրանօք սառածի սկսեղաւ , բայց իր հօրեղբորդուոյն խօսքերը փառատեցին այս դժացումը , և շփոթեցին իր գաղափարները . մոլորած , խելքը գլխէն գացած , հաճեցաւ , և մոռնալով Մատուծոյ և իր հօրը համար ունեցած պարտքերը , ձգեց , առնէն փախաւ : Բոլոր պատրաստութիւնները իր հօրեղբորդին առաջուց բրած էր , և մէկը չկրցաւ անանց հետքը գտնել : Սէկտեղ գացին հեռու քաղաք մը , ուր տեղ ամեն տեսակ անկարգութիւններու մէջ ինկան :

Մհա Մ. լեքսիանոսի բրածը , այն որ երբեմն շատ աղէկ և շատ խնաստուէն էր : Տէս մինչև ուր կրնայ իյնալ ան

տղան , որ առաջին յանցանքի մը տեղի տալու տկարութիւնը կ'ունենայ :

Այս յիմար երիտասարդը երկար աւտեն չվայելեց իր յանցանաց պտուղը : Արբոր իր առջին մոլեգնութիւնը փաբատեցաւ , յիշեց իր հայրը և խղճմը տանքը սկսաւ զինքը տանջել :

Իր տանջանքը ամեն վայրկեան աւելի խիստ կ'ըլար : Չկար երբէք զուարճութիւն և ոչ երբէք հանգիստ իրեն համար : Այն խնջոյքներուն ու հանգէսներուն մէջ ուր որ զինքը կը տանէին , դեղնած ու խռոված էր , և երեսէ ձգած հօրը դէմքը իր սրտին մէջը հազարաւոր խթաններ կը մխէր : Արբեմն կ'երեւակայէր իր հայրը որ կը հառաչէր ու արտասուք կը թափէր , երբեմն կը կարծէր որ անիկա բարկութեամբ բորբոքած էր , և իր յանցաւոր տղան անիծելը կը լսէր : Աս աղետալի պատկերները իր երազներուն մէջն անգամ անդադար կը ներկայանային , և իր այն կարճ ու ընդմիջեալ քունը՝ որ

իր խղճին տաղնապները իրեն կը թու
զէին վայելել, կը խռովէին :

Այսպիսի կեանք մը անոր անտանե-
լի եղաւ : Սխաբը դրաւ ամեն բան ը-
նել իր յանցանքը ջնջելու և նորէն իր
հօրը հաճոյանալու համար : Այ սուս
սպասկառանքը, ոչ ալ սպասո՞ցն վախը
կրցան զինքը նուաճել : Խիղճին խայթը
մաքրեր էր այս յանցաւոր սիրտը, և
ցրուելով անոր տկարութիւնը ու միան-
գամայն իր սնտախոյսերը, ու զիղ դա-
տողութիւն մը և զօրութիւն մը վրան
եկեր էին :

Բաժնուեցաւ մշտնջենաւորապէս
ան խաբեբայ բարեկամէն որ իր երբէ-
տասարդութիւնը մոլորեցուցեր էր, և
ճամբայ ելաւ դէպ իր հայրենի երկիրը :

Բեզէն քիչ մը յառաջ շինուած էր
իր հօրը սուենը, զուարճալի սպարտեզնե-
րով շրջապատած և սուանձնակի տեղ մը :

Հասնելով բլուրի մը վրայ, ուսկից
կը տեսնուէր այս սուենը, Ալեքսիանոս
կը կենաց սիրտը ձմլած : Չկրնար իր հե-

ծեծանքները բռնել, իր աչքերը կը լեցուին արցունքներով: «Ո՛հ հոս է ուրեմն, պօռայ Վ՛լեքսիանոս ընդ հատեալ ձայնով մը, հոս անցուցեր եմ իմ արդայութիւնս, անոր քով՝ որնոր արժանի չեմ ինձի հայր կոչելու »:

«Ո՛հ, որքան երջանիկ էի երբոր իմ մի միայն փափաքս անիկա դո՛հ ընել և անոր հաճելի ըլլալ էր, երբոր աշխատութիւնն ու ուսմունքը կը սիրէի, երբոր բոլոր իմ զուարճութիւններս անմեղ և մաքուր էին: Վ՛յս երջանիկ ժամանակը նորէն սլիտի ծնանի: Վ՛հա ետեմ, հայր իմ, նորէն կուգամ, քու Վ՛լեքսիանոսդ նորէն քեզի կը դիմէ »:

Եւ երբոր արագութեամբ բլուրէն վար կ'իջնար, իր յանցանքը մտածելով յանկարծ զարհուրանքով ստուեցաւ: Իր ոտքերը գեանին վրայ շղթայի զարնուածի պէս կը մնան, մէկ սաղ քրտաինք մը իր բոլոր անդամներէն կը վազէ: «Վ՛ս, ես անոր աչքին սլիտի երեւամ » . . . աս ըրած բաներէս ետքը:

• • • ճ՛հ , սխալ կարծեցի որ անոր
 առջևը ելլելու բաւական զօրութիւն
 պիտի ունենամ : Ա՛չ , չպիտի համարձա-
 կիմ երբէք , ես շատ յանցաւ որ եմ : Ի՞նչ
 երեսով անոր դիմացը պիտի ներկայա-
 նամ : Ի՞նչպէս պիտի յուսամ թէ ինձի
 նորէն պիտի սիրէ , երբ որ իմ փախչե-
 լովս անոր սրտին մէջ մէկ դաշոյն մը
 խօթեցի : Ի՛նձի պիտի վաճառէ , ինձի
 պիտի անիծէ : Եւ ինքնս ատոնց արժա-
 նի եղայ ” :

” Ինձի համար թողութիւն չկայ :
 Եւ անողորմ տղայ մը ու բարբ քնու-
 թեան առջև սոսկալի հրէշ մըն եմ ” :

Եւ խօսքերը ըսելով խեղճ Վ. Լեքսիա-
 նոսը խտտին վրայ կ’ընկայ կը մնայ , և
 շատ սաստիկ ցաւերով կը տափնապի :

Ի՛այց շուտով ներքին ձայն մը , մէկ
 երկնային ձայն մը կը լսուի իր սրտին
 մէջ ու զինքը կը քաջալերէ . “ Ա՛հ , պօ-
 աաց , հայր մը Կտուծոյ պատկերն է ,
 և իրեն դժութիւնը Կտուծոյ ողոր-
 մութեանը պէս անասան է : Ա՛չ , որ-

քան որ գէշէ իմ վարքս, անդառնալի կերպով մը չեմ դատապարտուած, ոչ, իմ հայրս ինծի չ'ատէր, ինծի չպիտի անիծէ ։

» Ախտի գթայ իմ խղճիս տագնապներուն վրայ ։ Թէ որ չ'ուզէր նորէն զիս իր տղուն պէս ընդունիլ, աղէկ անատենը անկէց պիտի խնդրեմ որ զիս ընդունի իր ծառայներուն և իր ունեցած գործաւորներուն կարգը ։ Աշխատութեամբ և զրկանօք իմ յանցանքներս պիտի քաւեմ, իմ զղջմանս անկեղծութիւնը փորձով պիտի յայտնեմ, պիտի արժանի ըլլամ որ նորէն իր գիրկը ինծի բանայ, և զիս կրկին իր որդին կոչէ ։

Իր առաջադրութիւնը հաստատ էր, բայց ինքը դեղնած էր ։ Բոլոր իր անդամները կը դողային և չէր գիտեր թէ ինչպէս իր դարձը իմացնէ և թողութիւն խնդրէ ։

Վերջապէս մէկ որոշեալ ժամ մը, երբ գիտէր թէ հայրը սովորաբար սարստէզներուն մէջ զբաղած կ'ըլլար, դադ

տուկ տունը կը մտնէ , հոն կը դտնայ մէկ ծեր ու հաւատարիմ կին մը՝ որ իր մանկութեան ժամանակը իրեն վրայ խնամք տարեր էր , և զինքը տեսնելով զարմանքէն և ուրախութենէն քիչ մը նայ պիտի մարէր :

Կը մտնէ ան կնկանը հետ իր հօրը սենեակը . ի՛նչ կը տեսնէ , իր պատկերը միշտ մի և նոյն տեղը , այն իր պատկերը , որ կը կարծէր թէ այն դասիկոնէն արսորեալ էր : Այս տեսնելով նորանոր ուժ մը կ'առնէ , և իր դարձն ու զղջումը հօրը իմացունելու համար գորովական և ճարպիկ միջոց մը կը մտածէ :

Պատկերը վար կ'իջեցնէ , ու ձեռք կ'առնէ իր մատիաները : Այս պատկերը որ առաջին Ալեքսիանոսը կը ներկայացընէր , աչքերը անմեղութեան ուրախութեամբը լեցուած և շրթունքները երջանկութեան ժպիտովը զարգարուած , կ'աւրէ , կ'ուզէ , կը փախէ շուտով գլխաւոր գիծերը : Եր դէմքը որ առաջ շատ զուարթ էր , հիմա վիշտ ու պատ

կառանք կը յայտնէ , և զզջումը կը նը-
կարուի արաստուօք թըջուած աչքե-
րուն մէջը : Ամանու թիւնը նոյնն է ,
միշտ ինքն Ալեքսիանոսն է , բայց աղեր-
սարկու ու տառապեալ Ալեքսիանոսը :

Ար ըսէ սանդուխին վրայ իր Հօրը
բայլերուն ձայնը , շուտով պատկերը իր
տեղը կը դնէ ու քովի խուցին մէջը կը
պահուըտի :

Հայրը սենեակը կուգայ , իր առա-
ջին նայուածքը իր սովորութեանը հա-
մեմատ , կ'ուզզուի դէպ իր աղուն
պատկերը : Սայն տեսնելով աղաղակ
մըն է կը բըյընէ , բայց չէ թէ նլովքի
ու բարկու թեան արձագանք մը , հասպա
ուրախու թեան և երջանկու թեան նշան :

« Իմ աղաս , իմ Ալեքսիանոսս կը
զզջայ , ինձի կրկին կը գիմէ : Այկուր ,
մէ եկուր , քու հայրդ քեզ կը կոչէ ,
քեզի կը ներէ » :

Ալեքսիանոսս կը վաղէ խուցէն , կ'իյ-
նայ իր հօրը ոտքը , անիկա զինքը գետ
նէն կը վերընէ , և կը գրկէ : Հաշտու-

Թիւնը կը կնքուի ամենագորովալից գըգ-
ուանքներով : Այս օրուքնէ ՚ի վեր Ա-
լեքսիանոսին վարքը անպարսաւ և ու-
րիշ պատանեաց արժանաւոր օրինակ մը
եղաւ :

Աւրասակից ըլլանք մենք ալ անոնց,
որ ասոր պէս զզման միջոցով նորէն գէտ
՚ի առաքինութիւն դարձած են . բայց
աւելի ուրասակից ըլլանք անոնց, որ
ամենեւին առաքինութենէ չհեռանա-
լու բարեբաղդութիւնը ունեցեր են :

Ծ Ն Ո Ղ Ա Յ Հ Ա Մ Ա Ր Պ Ա Ր Տ Ք Ե Ղ Ա Ծ

Պ Ա Տ Ի Ի Ո Ի Մ Ե Ծ Ա Ր Ա Ն Ք

Ղէ թէ մինակ մեր տղայութեան
ու մեր երիտասարդութեան ատենը
պէտք է որ մեր ճնողքը պատուենք ու
յարգենք, հասցա բոլոր մեր կենացը
մէջ . և նաև քանի որ տարիքնիս առնենք,
այնքան ալ մեզի համար սուրբ է այս
պարտքը . որովհետև մեր օրինակը ա-

ւելի ներգործու թիւն ունի, մանաւանդ պատանիներուն վրայ :

Չկայ երբէք արժանաւորութիւն, որքան փառաւոր ալ ըլլայ, որ կարենայ մեղի այս պարտքէն ազատել :

Քանի որ կը բնակինք մեր ճնողացը քով, այս մեծարանքը պէտք է որ յայտնենք անոնց՝ հաճելի ըլլալու շարունակ զգուշութեամբ մը, փութաջան տեսութիւն ընելով, հանապազօրեայ խնամքներով : Թէ որ անոնցմէ հեռացած ենք, պէտք է անոնց միշտ նամակ գրել, տեղեկանալ անոնց որպիսութեանը, ամեն մեղի վերաբերեալ բան անոնց հաղորդել, կարևոր բան մը չընել առանց անոնց հարցընելու, և պէտք է կարելի եղածին չափ յաճախ անոնք տեսնելու երթալ :

Քաւական չէ որ մենք մինակ անոնք պատուենք, այլ պէտք է պարտաւոր ընենք մեր կիներն ալ, մեր տղաքն ալ, մեր ծառաներն ալ անոնց շատ մեծարանք ցուցընելու. պարտաւոր ենք սովրեցը


նել մեր փոքր տղսցը , որ մեզի չափ սլատու
 ուեն զանոնք . թէ որ մեր ճնողքէն ա
 ւելի ուսումն ձեռք բերած ըլլանք ,
 պէտք չէ որ ասոր համար հպարտանանք
 ու մեզի անոնցմէ վեր կարծենք , որով
 հետե աւելի աղէկ պիտի ըլլար խորին
 տգիտութեան մէջ մնալ , քան թէ ուս
 մունք սովորիլ թէ որ այս ուսմունքը
 պիտի ապականէր մեր սիրտը և մեզի
 ապերախտ ու տմարդի տղաքներ պիտի
 ընէր :

Արբեմն երիտասարդ մարդ մը իր
 բնական ձիրքերովը , իր արիութեամբն
 ու նախախնամութեան մասնաւոր շնոր
 հիւը իր առաջին աստիճանէն շատ վեր
 կ'ելլէ , հարուստ , զօրաւոր և երևելի
 կ'ըլլայ : Այն ատենը պէտք է որ իրեն
 մէկ անպատմելի երջանկութիւն մ'ըլլայ
 իր հայրն ու մայրը մասնակից ընեն իր
 վայելած բարիքներուն , ասիկա պարտք
 մըն է , բայց այս պարտքին կատարումը
 անանկ հաճելի է , որ կրնայ միանգամայն
 մէկը անսիկա բերկրութիւն մը կոչել :

Եւ բերկրու թեանց մէջ անկէց աւ
 ճի՞ քաղցր, աւելի պատուաւոր ու
 աւելի մարուրը չկայ :

Տեսնուեր են, կ'ըսեն, երբեմն աւ
 նանկ տմարդի տղաք որ խմաստուն կամ
 հարուստ ըլլալով, կ'ամչնան եղեր իւ
 բենց ճնողացը աղքատութենէն ու
 հաստը հագուստներէն : Չեմ կարծեր
 որ անանկ հրէշներ ըլլան, կամ թէ ըլ
 լան ալ՝ շատ քիչ են, և բոլոր պատուա
 ւոր մարդոց անաբգանաց ու սոսկման
 առարկայ մըն են :

Վերջապէս՝ այն մեծարանքը որ մեր
 հօրն ու մօրը կը պարտաւորինք, պէտք
 չէ որ անոնց կենացը հետ դադրի : Վէտք
 է որ մեծ խնամքով պահենք անոնց յի
 շատակը և պատուենք անոնց անունը
 մեռնելուն ետքն ալ :



Դ Ե Ր Չ Ա Կ Ն Ո Ի Ս Ե Ղ Ա Ն Ա Ի Ո Ր Ը

Պոսի քաղաքներէն մէկուն մէջ կը
 կենար մէկ շատ աղքատ՝ բայց իր վիւ

Ճակէն շատ գոհ բարի ծեր դերձակ մը .
անոր հետ էր նսե իր կինը , որ զուար
թութեամբ անոր աղքատութեանը
մասնակից կ'ըլլար , և անոր կեանքը ա
ւելի քաղցրացնելու կը փութար . եր
կուքն ալ շատ ծերացեր էին , բայց կը
վայելէին մէկ կատարեալ առողջութիւն
մը և աղէկ ալ կ'աշխատէին :

Իրենց Գրանչխակոս անունով մէկ
հատիկ զաւակը , որուն իրենց վիճակէն
շատ վեր կըթութիւն մը տալ տուեր
էին , իրենց բովէն մեկնած էր շատ ժա
մանակէ ՚ի վեր Հնդկաստան երթալու ,
և բազմ փնտուելու համար :

Քսան տարիէն աւելի էր որ անիկա
չէին տեսեր , միշտ անոր վրայօք կը խօ
սէին , ամեն օր կ'աղաչէին Աստուծոյ
որ անիկա երբէք երեսէ չձդէ . չէին
ետ կենար ամեն կիրակի օրերը զինքը
հրապարակական աղօթից յանձնելէն
այն քահանային միջոցաւը , որ իրենց
վրայ շատ համարում ու դութ ունէր :

Իրենց տղան ալ իր կողմէն ծնողքը

չէր մտնար : Շատ արկածներու հանդիպեր էր , և անոր համար չէր կրցեր երբէք իր լուրերը անոնց տալ , որովհետեւ անանկ մէկ գաւառ մը գացած էր , որ հաղորդութիւն մը չ'ուներ Վաղղիայի հետ : Սեղանաւոր եղաւ , ժողովեց իր աղէկ վարմունքովը մեծ հարստութիւն մը , նորէն Վաղղիա եկաւ՝ իր արուեստը Փարիզի մէջ բանեցրնելու համար :

Երբոր իրեն մէկ տուն մը ընտրեց և ամեն բան կարգադրեց , միտքը դրաւ անձամբ տեղեկանալ իր ծնողացը կենցաղավարութեանը վրայ : Սպասաւորներուն իրեն չսպասել հրամայելէն ետքը , ձին հեծաւ առանց մէկը իր հետը առնելու , և գնաց իր ծննդեան երկիրը :

Իրիկուան ժամը ութին երբոր ծերունի դերձակը ու իր կինը կը քնանալին , յանկարծ արթնցան սեղանաւորին իրենց պղտիկ տանը դուռը զարնելով ըրած գղրդիւնէն : Հարցուցին թէ « ո՞վ է » : Բացէք , բացէք ըսաւ անոնց , Քրանչիսկոս սղանիդ է :

“ Աւրիշները գացէք խաբեցէք պատասխանեց պարզամիտ մարդը, ճամբանիդ գացէք, գողեր, հոս ձեզի համար ընելիք բան մը չկայ, թէ որ Աստուած անոր կեանքը պահպանած է, Պրանչիսկոս հիմա Հնդկաստան է :

— Չեր զաւակը ալ Հնդկաստան չէ, կրկնեց սեղանաւորը, դարձած եկած է, անիկա է որ ձեզի հետ կը խօսի, ձեր տանը դուռը մի գոցէք անոր — :

— Ելէնք, Յակոբ, ըսաւ ան ատենը կինը, կարծեմ իրաւ ասիկա Պրանչիսկոսն է, կարծեմ ձայնէն սլիտի ճանչնամ զինքը ” :

Ելան շուտով երկուքն ալ հագուեցան արտորնօք : Հայրը ճրագը վառեց, և մայրը գնաց դուռը բանալու. ատաւ Պրանչիսկոսը, և անհնար ըլլալով անիկա չճանչնալ, անոր ճիտը փաթառւեցաւ : Հայրն ալ նոյն զգացմունքներով շարժուած, ինքն ալ գրկեց իր տղան. և սյս երեք անձինքը, այնչափ երկար ատեն իրարմէ հեռու մնալէն

ետե մէկտեղ եկած տեսնուելով զըւար-
ճացած, չէին կրնար կշտանալ իրարու
սիրոյ նշաններ տալու բերկրութենէն :
Լ. յաչափ քաղցր շարժմունքներէն ետքը,
սեղանաւորը իր ձիուն երասանակը հա-
նեց և ախուի մը մէջ դրաւ, ուր որ
տանը սնուցիչ կով մը կար, և պատմեց
ճնողացը իր ճանապարհորդութեանը
ու իր կենացը զանազան արկածները :

Պատմութիւնը երկար տևեց և կա-
րելի էր որ անտարբեր անձինք ճանձրա-
ցընէր, բայց մէկ տղայ մը որ իրեն վե-
րաբերեալ բաները կը պատմէ, չկրնար
հօր մը ու մօր մը ու շաղրութիւնը հոգ-
նեցընել. ճնողաց համար չնչին դէպք
մը չկայ. ուստի անյագութեամբ անի-
կա մտիկ կ'ընէին, և անոր ըսած ամե-
նափոքր բաներն անդամ անոնց վրայ
սաստիկ վշտի կամ ուրախութեան տը-
պաւորութիւն մը կ'ընէին :

Երբոր պատմութիւնը վերջացուց,
իրենց ըսաւ թէ եկեր էր, որ իրեն ըն-
չից մէկ մասը անոնց ընծայէ, և աղա-

չեց իր հօրը որ ալ չաշխատի, « Չէ, իմ տղաս, ըսաւ անոր Յակօբ, կը սիրեմ իմ արուեստս, անիկա չպիտի ձգեմ »:

— Ինչո՞ւ համար, կրկնեց սեղանաւ որը. ալ հանգչելու ժամանակ չէ՞ արդեօք: Չեղի չեմ առաջարկեր դալ ինձի հետ Փարիզ բնակիլ, աղէկ գիտեմ որ այն մեծ քաղաքը կենայլը ձեզի համար զուարճութիւններ չըպիտի ունենայ: Չեմ ուզեր ձեր հանգիստ կեանքը խառնել, բայց գոնէ ինքզինքնիդ դժուար աշխատութենէ խնայեցէք, և ապրեցէք հոս հանգիստ, որովհետեւ կրնաք »: Մայրը տղուն զգացմանցը կողմնակից եղաւ, Յակօբ ալ ան առե՛ն հաճեցաւ: « Ես աղէկ, Դրանչիսկոս, ըսաւ հայրը, քեզի հաճելի բլրալու մտօք ալ չպիտի աշխատիմ գեղին ամեն բնակիչներուն համար, մինակ իմ ու Պ. Քահանային զգեստները պիտի կարկրտեմ »:

Այս դաշինքէն ետքը սեղանաւ որը իրեն համար եփուած երկու թարմ հաւ կիթը կերաւ, պառկեցաւ, և բը-

նացաւ անանկ զուարճութեամբ մը ,
 որնոր մինակ աղնիւ բնութիւն ունե-
 ցող տղաքները կրնան երեւակայել :
 Գրանչխակոս երեք օր իր ճնողացը հետ
 անցուց , ետքը անոնց թողուց ստրկի
 մեծ գումար մը ու նորէն Փարիզ դար-
 ձաւ : Բայց տասն և հինգ օր ետքը
 շատ զարմացաւ տեսնելով յանկարծ
 հայրը որ իր տունը կը մանէր : « Ի՞նչ
 պատճառ քեզի հոս բերաւ , հայր իմ ,
 ըսաւ անոր » : — Տղաս , պատասխանեց
 ծերունին , նորէն քեզի կը բերեմ քու
 ստակդ , առ անիկա , ես կ'ուզեմ իմ
 արուեստովս ապրիլ : Չանձրութենէն
 կը մեռնիմ քանի որ չեմ աշխատիր :
 — Աղէկ , հայր իմ , կրկնեց Գրանչխակոս ,
 գեղը դարձիր , շարունակէ , քու ար-
 ուեստդ բանեցուր , բայց միայն չնե-
 ղանալու չափ . առ քու քսակդ , և ի-
 մինիս մի խնայեր :

— Ի՞նչ կուզես որ ընեմ քու ստա-
 կիդ , ըսաւ հայրը :

— Ատով աղքատներուն օգնէ , պա-

տասխանեց սեղանաւորը , գործածէ
ատիկա ինչպէս որ քահանան քեզի
խրատէ :

Իարի ծերունին , այս պատասխա-
նէն զուարճացած իր գեղը դարձաւ :
Իր կնկանը հետ աշխատութիւնը շա-
րունակեց , բայց առանց շատ հոգնե-
լու : Ամէն մէկ վեց ամիսը անգամ մը
տղանին կուգար զիրենք տեսնել , և
երբէք չտեսնուեցաւ ոչ անկէ աւելի
երջանիկ տղայ մը , և ոչ ալ ասոնցմէ
աւելի երջանիկ ծնողք մը :



ԱԿՆԱԾՈՒԹԻՒՆ , ԽՆԱՄԻ ՈՒ

ՊԱՏԻ ԾՆՈՂԱՅ

Իաւական չէ մեր ծնողքը սիրելը ,
պէտք է անոնց գործքով ալ ցուցնել ,
անոնց երջանկութեանը համար ամէն
բան ՚ի գործ դնելով :

Պէտք է որ անոնց հետ մէկ քաղցր
ու ժրջան վարմունք մը ունենանք .

առանց անոր ոչ մէնք կրնանք երջանիկ
ըլլալ, և ոչ ուրիշները երջանիկ ընել :

Այս առաքինութիւնը ստանալը
երբեմն քիչ մը դժուար է, նախ մեզի
յաղթելու աշխատութիւնը ունինք .
ծանր կը թուի մեզի երբէք չըսել և
չգործել մեզի սիրելի եղող անձանց ան-
հաճոյ բաները, բայց երբ այս սովու-
րութիւնը մէկ մը ստացուած է, ջանքը
ալ մեզի դժուարին չէ, և ամենապա-
տուական օգուտներ կը քաղենք մեր
վարքէն :

Միշտ շատ գէշ բան է բարկասիրա-
բլլալ, և դժնդակ բնաւորութիւն ցու-
ցնելը, մանաւանդ հօր ու մօր դէմ,
որով չէ թէ մինակ այլանդակ ու ան-
խելք մարդ մը կ'ըլլայ անանկը, հասար-
շատ ալ յանցաւոր : Պարսպ խօսք մը նե-
որ կ'ըսեն թէ՛ երբեմն թէ որ մէկը այս-
պէս ինքրզինքը մոռնայ, անոր մինակ
սրատճառը բնու թեան աշխուժութիւնն
է, և սրտին մէջը բան մը չըկայ :

Ասանկ խոտորումները բնաւ չէն կրը-

նար արդարանալ : Կամարարու թիւնը ,
 քաղցրու թիւնը , մարդասիրու թիւնը
 սիրելի հանգամանքներ են , որ մարդ-
 կային ընկերութեան զուարճութիւն
 կը բերեն : Օտարականներուն հետ ու-
 նեցած վերաբերութիւններնուս մէջ
 այս որպիսութիւնները ապահով միջոց
 մըն են անոնց մարդասիրութիւնը մեզի
 քաշելու համար , իսկ ընտանեաց մէջ
 սրտոք մըն են : Վարտք մըն են մանաւանդ
 մէկ հօր մը ու մօր մը դէմ , որոնք իրենց
 բարիքներովը չափազանց իրաւունք ու-
 նին չէ թէ միայն ակնածութեան մը ,
 հապա իրենց տղոցը սիրալիր մեծարա-
 նացը :

Աւրեմն միշտ անոնց դէմ կամարար ,
 համբերող ու փութաջան ըլլանք , միշտ
 հաճոյական կերպով մը սպասասխան
 տանք անոնց : Ասկէ զատ ունենանք ա-
 նոնց համար այն խնամքներն ու այն ան-
 թիւ յարգանքները որոնք մէկ ճշմարիտ
 սէր մը միշտ մեզի կ'ազդէ :

Իրենց հասակը արդէն տրտմութեան

չատ ենթակայ է , անոնք նեղելու պատ-
ճառ չ'ըլանք , այլ ընդհակառակն ամեն
օր անոնց զուարճութիւն պատրաստե-
լու նորանոր միջոցներ հնարենք :

Թէ որ մեր փոյթն ու յարգանքները
բնաւ չդադրին , մեզ տեսնելով միայն
կը զօրանան ու կը հրճուին : Անոնց շըր-
թանցը վրայ մեր ծագել տուած ամեն
մէկ ժպտար և իրենց սրտին մէջ արծար-
ծած բերկրութեան ամեն մէկ կայծը
անոնց օրերը երկնցընելու առիթ կ'ըլ-
լան , և անոնց նորանոր օրհնութիւն-
ները վրանիս կը բերեն :

Ասանկով պիտի ընդունինք մեր վար-
քին համար կրկին փոխարէն մը . մէկ մը
մեր ճնողացը երջանկութիւնը տեսնե-
լով , մէկ մ'ալ իրենց օրհնութիւննե-
րուն շնորհիւր մեր վայելած երջանկու-
թիւնը , որովհետեւ հօր ու մօր օրհնու-
թիւնները միշտ Աստուած կը լսէ :



ՅՈՎՀԱՆՆԱ ԲԱՌԷԼ

(1836)

Յովհաննա Բառէլը՝ Մուլանժէ ծը
նած էր , որն որ Լնտա — է — Լուառ
նահանգին մէջ Սոնթուէզուի մօտն է :
Իր հայրը որմագործ էր , և շատ բարի ,
աշխատասէր , և իր ընտանիքը աղէկ կրթ
թող մէկը հռչակեալ էր : Մուլանժէի
մէջ տնակ մ'ուներ , փոքրիկ ալ արտ մը :

Իր Յովհաննա աղջիկը սպասաւոր
էր այն տեղերը բնակող ընտանիքի մը
քով , որ անոր շատ վարձք կուտային :

Իմացաւ որ իր յիսուն և հինգ տա
րեկան մայրը տկարացեր էր և միայն գա
ւազանի մը օգնութեամբ կրնար քալել ,
հրաժարեցաւ այն ունեցած շահաւէտ
վիճակէն ու իր մօրը քով եկաւ , ալ իր
մայրը չձգել երթալու սրայմանաւ :

« Կ'ուղեմ քեզի հետ կենալ , ըսաւ
մօրը , եթէ ծառայութիւն մը պիտի ը
նեմ , աւելի արժան է որ իմ մօրս ծա
ռայեմ քան թէ օտարներու » : Ի այց քիչ
ատենէն հայրն ալ հիւանդացաւ , մէկ

դաժան ցաւի մը բռնըւեցաւ , ու գըրեթէ կոյր եղաւ : Յովհաննա խնամք տարաւ անոր ալ իր մօրը պէս , իրեն խնայու թեամբը ժողուած ստակը հօրն ու մօրը համար զոհելէն ետքը , պզտիկ արտն ալ ծախուեցաւ :

Ողորմածասիրտ անձեր ազնիւ աղջկանը օգնութեան հասան , որուն անձնանուէր ծառայութեանը վրայ ամեն մարդ կը զարմանար : Տասը տարիէն ետեւ հայրը մեռաւ , և Յովհաննա դառնապէս ողբաց անոր մահը : Այլ անոր բաւ . « Ասիկա քեզի ու հօրդ համար մեծ աղատութիւն մըն էր : Խեղճը շատ կը տանջուէր . հիմա դուն ալ քիչ նեղութիւն պիտի կրես :

— Անոնք որ ինձի այսպէս կը խօսին , բաւ Յովհաննա , կը կարծեն թէ զիս կը մխիթարեն , սակայն աւելի ցաւ կը պատճառեն . չեն գիտեր թէ ինչպէս կը սիրէի իմ խեղճ հայրս . . . վերջապէս Աստուած իրեն վարձքը տուաւ ես ալ իմ վարձքս պիտի ունենամ » :

Յովհաննա մինակ մնաց իր մօրը հետ ,
կը մանէր , կանաչեղէն ժողովելու կեր-
թար , և իր ժամանակին մեծ մասը
խեղճ հիւանդ մայրը խնամելով կ'ան-
ցընէր :

Մայրը , որ մինչև այն ատենը կըր-
ցեր էր գաւաղանի մը օգնութեամբը
բալել , բողբոլին կոյր եղաւ , անդա-
մալուծութիւնն ալ չէր թողուր անոր
և ոչ քիչ մը շարժիլ . պէտք էր անիկա
վերցնել , պառկեցնել , նստեցնել : Յով-
հաննա քսան տարիէն աւելի ժամանակ
չեղաւ գիշեր մը , որ առանց արթննալու
անցընէր : Սօրը վրայ ունեցած խնամք-
ներուն պատմութիւնը հաղիւ թէ հա-
ւատարու բան է : Այս կիներ շատ բա-
րեպաշտ էր , ամեն օր կ'աղօթէր իր
թիկնաթուին մէջը : Վերափոխման առ-
ջի իրիկուն մը բաւ իր աղջկանը :
“ Վաղը Մայր Աստուածածնին՝ Օգոս-
տոսի տօնախմբութիւնն է , շատ կը
փափաքիմ եկեղեցի երթալ ” : Ասանկ
հիւանդ մէկու մը ընկերանալու համար

աւելի հարուստ վիճակի մը մէջ թէ և
կառք ալ ըլլարու ըլլայ նէ, աղաք թէ և
անձնանուէր՝ մեծ դժուարութիւններ
կը հանեն անոր առաջը :

Բայց Յովհաննա մեծ եռանդով մը
պատասխանեց, « Եկեղեցի՞ երթալ
կ'ուզես, շատ աղէկ, բարի մայր իմ.
կ'երթանք, հաստատ՝ ես զքեզ կը տա-
նիմ, հանգիստ եղիր — : Աւ անոր ձեռ-
քը բռնեց համբուրեց, որովհետեւ
միշտ քաղցր գգուանքներով ու գորովա-
լից ակնածութիւններով կը խօսէր ա-
նոր հետ :

Աւ հեռուեալ օրը Յովհաննա կ'ան-
ցընէ իր ձախ ձեռքը մեծ թիկնաթողի
մը թւին մէջը, իր մայրը կը կանգնե-
ցընէ, աջ ձեռքովը կը բռնէ անիկա .
և ծեր մայրը այսպէս պաշտպանուած,
գրեթէ հազիւ երկու քայլ կ'առնէր . . .
ետքը կը կենային, չ'ովհաննա քիչ մը
անիկա կը նստեցնէր թիկնաթողին վրայ,
ետքը կը վերցնէր, ու նորէն կ'սկսէին
քալել :

Այս դժուարին ճանապարհը երեք քառորդէն աւելի կը տւէր, թէպէտ և հեռաւորութիւնը հազիւ թէ հինգ վայրկեան էր :

Ետ դարձած ատեննին, որ նոյն կերպով կ'ըլլար, Յովհաննա բողոքովին ուրախ էր ու կըսէր. « Սիրելի մայրս, ազէկ ազօթեցիր Աստուծոյ, գո՛հ ես, յոգնած չես, անանկ չե՞ մի » :

Ասկէ վերջը այս աշխատայի երթևեկութիւնը կատարեցին որչափ որ բարի կիներ նորէն ուզեց :

Յովհաննա մինակ իրեն կը պահէր այն սեւ հացը, որ բարեպաշտութեան դիւանին ստասաւորը կուտար, և ծախու կ'առնէր իր մօրը համար ձերմակ հաց :

Կարելի եղածին չափ յաճախ կը պատրաստէր անոր կարագ, պանիր ու կաթ : Իսկ ինքը ուրիշ բան չէր ուտէր, բայց միայն գետնախնձոր :

Օր մը մէկը անոր անուշ կարկանդակ մը խրկեր էր, ուսկից գրեթէ բը-

նաւ չէին կերած : Երկար ատենէն ետ-
քը , զարմանքով կը տեսնէին որ դեռ
կարկանդակէն հոն կար :

Կ'ըսէին . « Բու կարկանդակդ դեռ
չէ՞ս լմնցուցեր :

— Ա՛հ , խնայելով կը գործածեմ՝ անի-
կա իմ մօրս համար , կերակուրին ատենը
անկէց մանր մանր կտորներ կը կտրեմ ,
կուտամ անոր , որ ախորժանօք կ'ուտէ :

— Բուն բնաւ չէ՞ս ուտեր :

— Սե՛ծ մեաս է թէ որ ես անկէց
ուտեմ , խեղճ կնոջը բաժինը կը քիչ
նայ , ասիկա անոր փոքրիկ զուարճու-
թիւնն է . . . ոչ կը տեսնէ , ոչ կը լսէ
և միշտ կը տանջուի . . . բոլոր կրցածս
ալ որ իրեն ընեմ , դեռ շատ քիչ է ,
որովհետեւ խեղճ հիւանդը բոլորովին
խուլ եղաւ » :

Իր մայրը՝ հիւանդութեանցը միջոցին
անանկ աղէկ նատած էր թիկնաթուռի
մը մէջ , և անանկ մայրութեամբ հազ-
ուած էր , որ դիւրին էր տեսնել թէ
ի՞նչ գորովանօք խնամարկուած էր :

Երբեմն վիշաք կը խստացնէր իր բնութիւնը, և քանի կ'երթար, իրեն ծառայելը դժուար կ'ըլլար :

Իսպց Յովհաննային քաղցրութիւնն ու կամարարութիւնը բնաւ չփոխուեցան : Անոր այցելութեան եկողներուն կ'ըսէր :

« Մհ, երանի թէ անիկա առջի ատենները ճանչնայիք, շատ ազնիւ կին մըն էր, դժուար ժամանակներու մէջ իր ընտանիքը հոգալու չափէն եւել կ'աշխատէր :

» Ինքը չափազանց քաղցր և բարի էր : Երկար ժամանակէ 'ի վեր հիւանդ ըլլալուն թէ որ նեղութիւն կու տայ ալ, յանցանքը իրը չէ, ցաւն է որ ասանկ ընել կու տայ : Մհ, Աստուծոյ առջին աղէկ վարձք պիտի առնէ . . . » :

Ամեն տղոց օրինակ ըլլալու համար հռչակուելու արժանի այս ազնիւ աղջկանը վարձքն ալ Աստուծոյ առջին մեծ պիտի ըլլայ :



Սեր ճնողացը ցուցնելու մեծարա նաց ամենէն աղէկ նշաններէն մէկը գորովանօք մեր եղբայրները ու բարերը սիրելն է, և միշտ անոնց հետ կատարեալ բարեկամութեամբ ապրիլն է :

Հօր ու մօր համար՝ իրենց տղոցը մէջ տեսած միաբանութենէն աւելի զուարճալի բան չկայ :

Օրուորը պէտք չէ որ իր առաւելութիւնները չարաչար գործածէ. պէտք է ընդ հակառակն տկարին համար կամակարութեամբ և հեղութեամբ լեցուն ըլլայ :

Տկարն ալ իր կողմանէ պէտք չէ որ չափազանց երես առնէ այն համբերութենէն որ իրեն կը ցուցնեն, այլ պէտք է հրաժարիլ զգուշութեամբ այն բաներէն որ կրնան իր եղբայրները բարկացնել :

Պէտք է որ եղբայրներու մէջ իրար նախատել և իրարու զարնել չըլլայ :

Ի՞նչպէս աղէկ կրնանք վարուիլ օտարներուն հետ, թէ որ միաբանութիւն պահել չենք գիտեր մեր յատուկ ընտանեաց անհասներուն հետ :

Նախ մեզի համար պարտք մըն է միշտ փոքրերուն բարի օրինակ ըլլալ և անոնք մեր վարքովը ու մեր խրատներովը յորդորել, որ մեր ծնողացը հաճոյ եղած բանը ընեն :

Այս նկատմամբ հասակաւ մեծերը հարկաւոր պարտք մը ունին կատարելու, որովհետեւ միւսներէն աւելի խելահաս են, ու իրենց օրինակը կրնայ աւելի ազդեցութիւն ունենալ, աւելի խտրու պարտական են փոքրերուն հնազանդութեան և բարի վարուց անըստ գիւտ օրինակներ ըլլալու :

Մէկ անդրանիկ եղբօր մը պարտք է նաեւ, որ խնամարկէ իր փոքր եղբայրներն ու քոյրերը, բարեկամութեամբ խրատէ անոնք, բարեկամաբար յանդիմանէ երբոր յանցանքի մը մէջ իննան, և անոնց կրթութեանը մէջ հօր և մօր

օգնականն և փոխանորդ ճանչցուի = Ասիկա մեծ պատիւ մը, նաեւ սուրբ պարտականութիւնն մի է :

Պատանիները իրենց քոյրերուն ամեն տեսակ ակնածութիւններ ու մեծարանքներ ընելու են, որովհետեւ անոնք աւելի տկար ու փափուկ ու շատ զգուշթեան կարօտ են : Պէտք է անոնք մխթարել իրենց նեղութիւններուն ատենը, անոնց օգնել իրենց աշխատութիւններուն մէջ :

Մանաւանդ պէտք է բնաւ չխօսիլ անոնց հետ բարկանալով ու խատութեամբ, և իրենց առջին չքսել անանկ բան մը, որ իրենց ականջին անհաճոյ կրնայ ըլլալ : Պէտք է մեծարել իրենց համեստութիւնը և խնայել իրենց դիւրագգացութեանը :

Եղբայրներն ու քոյրերը պէտք է որ միշտ իրար մեծարեն, սիրոյ և մտադրութեան ամեն տեսակ նշաններով :

Եղբայրները, թէ որ կարելի է նէ, պէտք է որ ջանան գերազանցել իրենց

քոյրերը՝ բարեկամութեան աս մըր
ցանքին մէջը: Արչափ որ անոնց համար
մեծարանք ունենան, այնքան ալ կը
յարգեն անոնց քաղաքավարութիւնն
ու բարի զգացմունքները, և այն քաղցր
միութիւնը որ կը տիրէ ընտանեաց մէջ,
կը հրձուեցնէ իրենց հօրն ու մօրը սիրտը:

ՀՈՒՆՁՔ ԾՆՂԿԱՆՑ

Փոքրիկ Լլգինէն իր անկողնին մէջն
անցուցեր էր գարնան գեղեցիկ օրերը:
Լլրբ բժշկուեցաւ և սկսաւ իր ուժը
նորէն ստանալ, ծաղիկները միտքը բե-
րաւ, և հարցուց թէ «Լլյս տարի ալ
ծաղիկները առջի տարուան պէս գե-
ղեցիկ էին»: Լլգինէ շատ կը սիրէր
ծաղիկները, բայց գեռ չէր կրնար դուրս
ելլել որ անձամբ ժողովէ: Ըն ատենը իր
անդրանիկ Լլգինէնու եղբայրը կողով
մ'առաւ, և ցած ձայնով իր մօրը ըսաւ -
«Լլրթամ դաշտերուն մէջէն քրոջս շատ
գեղեցիկ ծաղիկներ բերեմ: Ահ, դար-

ցած ատենս ի՛նչպէս գոհ պիտի ըլլայ ։

Եւ այս առաջին անգամն էր որ դաշտար ելաւ , որովհետեւ իր քրոջը սենեակէն դուրս չէր ելներ , քանի որ անիկա հիւանդ էր ։

Գարունը առջինէն խիստ աւելի գեղեցիկ երեւեցաւ իրեն . այն ուրախութիւնը որ կ'իմանար սրտին մէջ իր քոյրը ազատուած տեսնելով , բոլոր բնութիւնը աւելի զուարճալի կ'երեւցընէր իրեն ։

Եւ գինէոսկրովագէրուրախութեամբ մէկ կողմէն միւս կողմը բլուրին վրայ ելնելով ու իջնելով ։

Սոխակները կ'երգէին , մեղունները կը բզզէին , թիթեռները կը թռչտէին իր բոլորտիքը , և ամենագեղեցիկ ծաղիկները իր ոտքին տակը կը բացուէին . մէկ ծաղկէն մէկալը կ'երթար երգելով ։
Շուտով կողովը լեցուեցաւ , որուն վրայ դրաւ կարմիր հունտերով գործուած ու խոտէ թելի մը անցուցած մէկ գեղեցիկ պսակ մը ։

Ետքը նայեցաւ ժպտելով իր շինաւ

ծին, և կաղնիի մը շուքին տակը կակուղ մամուռի վրայ նստաւ : Հոն հանդարտիկ կը նկատէր դաշտը գարնան ամենազեղեցիկ պայծառութեան ժամանակը, և մտիկ կ'ընէր հաճութեամբ սոխակներուն երգը որ կարծես թէ իրարու կը պատասխանէին :

Եւ որովհետեւ հոգնած էր, հոն բունը տարաւ : Երբ մնջիկ կը քնանար, մըրիկ մը ելաւ : Մնայլ ամպը բարձրացաւ լուութեամբ, կայծակները փայլեցան և որոտումը գոռաց : Յանկաբժ հովը մունչեց կաղնիին տերեւներուն մէջէն : Տղան դողալով արթնցաւ, նայեցաւ իր բոլորտիքը որ երկինքը սպառնալից ամպերով ծածկուած էր, արեգակին և ոչ մէկ ճառագայթը դաշտը կը լուսաւորէր : Երթննալուն պէս արոտման սաստիկ հարուած մը լսուեցաւ, խեղճ տղան ապշած կը կենար այս անակնկալ վրդովմունքը նկատելով :

Եւ՛նղ, ահա այսպէս երկրիս վրայ մարդուս վայելած բոլոր զուարճու-

Թիւնները միշտ կը խռովին յանկարծա-
կան մըրիկներէ :

Անձրևի խոշոր կաթիլներ սկսեցին
անցնիլ կաղնիին տերևներուն մէջէն :
Տղան զարհուրած առաւ կողովն ու
փախաւ : Փոթորիկը իր գլխուն վրայ
էր , և անձրևն ու մըրիկը շատցան . և
որոտումը կը գոռար զարհուրելի գղըր-
գիւնովմը : Շուտմը Ալգինէոսին հան-
գերձներէն անցաւ անձրևը , ջուրը մա-
ղերէն և ուսերէն կը վազէր , հազիւ կըր-
նար իր ճամբան շարունակել : Թշուա-
ռու թիւնը կատարեալ ըլլալու համար ,
հովի սաստիկ հարուած մը կողովին մէջը
մտաւ , և այնքան խնամքով ժողված ծա-
ղիկները գետնին վրայ ցիր ու ցան ըրաւ :

— Աստուած իմ , սքուաց , բրոջս բիչ
մը զուարճութիւն տալու համար այն-
քան աշխատանք քաշելէս ետքը , սէտք
էր որ ամեն բան կորսուէր : Աւ բար-
կու թեամբ լցուած սպարապ կողովը գե-
տինը ձգեց և բոլորովին թրջած հեծ-
կըտալով տուն հասաւ :

Մըրիկը հանդարտեցաւ և երկինքը սլայծառացաւ : Թուչունները սկսեցին իրենց երգերը, և մշակն ալ իր աշխատութիւնը, օդը սլարդէր և զով, քաղցրը հանդարտութիւն մը կը տիրէր ձորին մէջ և բլուրներուն վրայ : Մնութիւնը բոլորովին վերածնեալ կ'երևէր, և դաշտին բնակիչները շնորհակալութեամբ և ուրախութեամբ լլուած, կը վերցընէին իրենց աչքը դէպ 'ի ամսը որ կը հեռանար՝ իրենց դաշտերուն օրհնութիւն և յաջողութիւն բերելէն ետեւ :

Եւգինէոս ամէցաւ իր բարկութենէն ու վհատութենէն : Աորէն դարձաւ լռելեայն իր գետինը ձգած կողովը փրկարուելու, ու նոր ծաղիկներով լեցնելու համար : Կողովը դեռ բլուրին վարի կողմին էր : Մացառ մը անիկա բռնած ու պատուպարած էր հովին սաստկութեանը դէմ : Տղան անիկա վերցուց, բայց ինչ զարմանք և ինչ ուրախութիւն, երբ իր բոլորտիքը նայելով տեսաւ որ անձ

րևը հազար նորանոր ծաղիկներ բուս-
ցուցած էր. հազարաւոր կսկոններ բաց-
ուած էին, և ցողին կաթիլները անդա-
մանդի պէս կը փայլէին տերեւներուն
վրայ : Աւգինէոս մէկ ծաղկէն միւսը
կ'երթար մեղուի մը պէս, և իր կողովը
շուտով լեցուեցաւ :

Արբոր արեգակը գէպ 'ի լեռանը
ետևի կողմը հակեցաւ, տղան ուրախու-
թեամբ տուն դարձաւ, նկատելով զար-
մացմամբ իր ծաղիկներուն գանձը, և
իր նոր ժողված կարմիր հատերով շին-
ուած սրակը : Մարը մտած արևուն
ճառագայթները կը լուսաւորէին իր
չնորհալի գէմքը, և իր աչքը աւելի
փայլուն ու սիրուն կ'երևէր, երբ տե-
սաւ իր սիրելի բրոջը ուրախութիւնն
ու շնորհակալութիւնը :

Աւգինէոս, ըսաւ անոր իր մայրը,
իրաւ չէ՞ թէ այն զուարճութիւնները
որ մենք կը պատրաստենք մեզի սիրող
ներուն՝ մեզի ամենահաճոյ են :

Այսպէս Աւգինէոս կրկնակի երջա-

նիկ եղաւ , երջանիկ՝ իր քոյրը զուարճա-
ցնելուն համար , և ալ աւելի երջանիկ՝
իր մօրը գոհունակութեանը արժանի ըլ-
լալուն համար :



Ծ Ն Ո Ղ Ա Յ Հ Ա Մ Ա Ր Զ Ո Հ Ե Ր Ը Ն Ե Լ
Ե Ի Ա Ն Ձ Ն Ա Տ Ո Ւ Ր Ը Լ Լ Ա Լ

Երբ որ մեր հայրն ու մայրը տարիք-
նին կ'առնեն ու ալ չեն կրնար ինքնի-
րեննին իրենց ամեն պիտոյքը հոգալ ,
մեզի պարտք է աշխատիլ անոնց համար ,
իրենց սնունդը և ուրիշ ծախքերնին
ճարել , և անոնց պատրաստել ան բա-
ները որ կրնան իրենց կեանքը զուար-
ճալի ընել :

Այս պարտքը յայտնապէս երախ-
տագիտութիւնը մեր վրայ դրած է :
(Օրէնքները մեզի կը պատուիրեն , բը-
նութիւնն ալ նոյնը մեզի կը խրատէ :

Յայտնի է թէ մեր կենսատու ծը-
նողքները իրաւունք ունին պահանջե-

լու որ մենք իրենց կեանքը պահպանե-
լու համար կրցածնուս չափ ամեն բան
ընենք :

Նաև յայտնի է թէ անոնք որ մեզ
խնամեցին , սնուցին , մեծցուցին անանկ
հասակի մը մէջ որ մենք բան մը չէինք
կրնար ընել մեզի համար , պէտք է որ
խնամուին , սնանին , մենէ օգնութիւն
ընդունին , երբ իրենց և մեր վիճակը
կը փոխուին , երբ մենք կը զօրանանք ու
անոնք կը տկարանան :

Այս պարտքը ամենայն զգուշու-
թեամբ կատարելով , դուրստի մը ար-
ժանի չենք ըլլար , վասն զի անհրաժեշտ
պարտաւորութիւննիս միայն կը կատա-
րենք ու պարտքերնիս կը վճարենք : Այլ
որ բնաւ այս պարտքը չվճարէր , չէ թէ
միայն անարգ ու ազնիւ զգացմունքնե-
րէ զուրկ մէկն է , հասցա նաև անհա-
ւատարիմ պարտապան մը :

Ինչպէս յայտնի կ'երևայ , օրին մէկը
ընտիր գեղացիին մէկուն՝ իշխանի մը
տուած ճարպիկ պատասխանէն : Այս

իշխանը անոր կը հարցնէր թէ ի՞նչ կը
նէր իր աշխատութեամբը վաստըկած
ստակը :

— Արեք մաս կը բաժնեմ, պատաս-
խանեց գեղացին, առաջին մասը իմ
պարտքերս վճարելու կը գործածեմ,
երկրորդ մասը իմ ու կնոջս ծախքերուն
համար, գանք երրորդին, ան ալ մեծ
շահով կը գործածեմ — :

— Այդ խօսքով ի՞նչ ըսել կ'ուզես,
հարցուց իշխանը :

— Ահաւասիկ, պատասխանեց բարի
գեղացին, առաջին մասը իմ ծեր ծնող-
քրս պաշտօնանելու համար կը գործա-
ծեմ, ասիկա պարտք մը վճարել չէ՞ մի :
Արրորդ մասն ալ աղաքներս կը թելու
համար, ասիկա ալ ստակը մեծ շահի
տալ չէ՞ մի — :

Իշխանը զարմացաւ այս աղնիւ և
խելացի պատասխանին : Գորովալից և
երախտադէտ աղայ մը այս պարտքին
կատարումը իրեն ճշմարիտ երջանկու-
թիւն մը կը համարէ : Արդարև ո՞րչափ

քաղցր է տղու մը սիրուն ճնողաց նուիրել իր խնամքներն ու բոլոր կարողութիւնները :

Ի՞նչպէս քաղցր է անոնց մատուցանել իր աշխատութեան պտուղները :

Ո՞րքան քաղցր է անոնց վերջին օրերը բարեկենդանութեամբ ու երջանկութեամբ անցնել տալ :

Ընդատմելի երանութիւն մըն է երբ մէկը կարող ըլլայ իր անձին սա խօսքը ըսել :

» Ինչ որ ընեմ, իմ ճնողքէս ընդունածիս խիստ քիչ մասը կրնամ իրենց հատուցանել : Իսկ թէ որ իմ երախտագիտութեամբս իրենց բարերարութեանը չեմ կրնար հաւասարիլ, գոնէ կը ջանամ որ կարելի եղածին չափ մօտենամ. թէ որ անոնք իմ առաջին քայլերուս առաջնորդեր են, ես ալ այսօր կ'օգնեմ իրենց գողգոջուն քալուածքին. թէ որ անոնք ինձի օգտակար խրատներ տուած են, ես ալ անոնց կը ցուցնեմ այսօր թէ այն խրատներէն օգուտ քաղած եմ. թէ

որ անոնք իմ ապրուստս պատուով ճարելու կարողութիւնը տուին ինձի, ես ալ այսօր իրենց կենացը կ'օգնեմ. թէ որ անոնք իմ տղայութեանս վրայ հրակած են, ես ալ իրենց ծերութիւնը երջանիկ կ'ընեմ — :

Մհալասիկ վեհանձն և մաքուր սիրտ ունեցողի մը ամենաճշմարիտ երջանկութիւնը : Մալական չսեպեր իրեն հրակել որ ճնողքը բանի մը կարօտ չ'ըլլան, հասցա կը հողաց որ հարկաւոր եղածէն աւելի ունենան. աւելի կը սիրէ որ ինքը այն բաներէն զրկուի, ու անոնց պատրաստէ այն զուարճութիւնները, որոնցմէ իրաւ կրնայ ինքը հրաժարիլ իրեն հասակին մէջը. բայց այն բաները ծերերու համար՝ իրենց նեղութիւններուն ատենը մէկ սփոփանք մը, մէկ մըխիթարութիւն մըն են :

Մալական չսեպեր այս պարտքը անըստգիւտ կերպով կատարելը, նաև անանկ մէկ շնորհալի ու վայելուչ կերպերով կ'ընէ, որ այն պարտուց յարգը

կ'աւելցնէ ու գինը կրկնապատիկ կ'ընէ :
 Եւ ամեն օր կ'աղաչէ Աստուծոյ ,
 որ պահէ իր ծեր և յարգելի ծնողքը ,
 որոնց իր ընտանեաց մէջ ըլլալը Աստու-
 ծոյ մէկ օրհնութիւնն է : Այսպէս կը
 պարտաւորինք խնամել մեր ծնողքը ի-
 րենց ծերութեան ժամանակը :

Սրիշ առիթներու մէջ որ անոնք
 մեզի պէտք մը կ'ունենան , մեր սիրտը
 կ'իմացնէ մեզի՝ ինչ որ պիտի ընենք :

Հիւանդութեան մը ատեն անոնք
 խնամելու , անոնք վրանդէ մը աղատե-
 լու , իրենց վիշտերը դադրեցնելու հա-
 մար ամեն բան քաշելու , ամեն բանի
 ձեռք զարնելու , ամեն բան ընելու
 պատրաստ ըլլալու ենք : Այն ազնիւ
 հայրերն ու մայրերը որ իրենց որդւոցը
 համար զոհ կ'ըլլան , հազուադիւտ չեն ,
 բայց կան նաև շատ ազնուական տը-
 ղարներ ու անձնանուէր աղջիկներ ու
 բոնց գեղեցիկ վարքը հիացման և ցա-
 լակցութեան նիւթ մըն է :

Այս գեղեցիկ և ազնիւ օրինակներ

ըր անթիւ են : Բայց մենք Քանդալի վիճակին գլխաւոր քաղաք Օսիլեաքցի երիտասարդի մը օրինակը յիշենք :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԻԺԻԷ

Եւաքինի և հարուստ Օսիլեաքցի տիկին մը իր ամուսինը և իր հարստութիւնը կորսնցուց յանկարծական թրշուառութիւններու իրարու ետև իր վրան գալովը : Իր անունը Վիժիէ տիկին կ'ըսուէր :

Իրեն մնացեր էր միայն մէկ տղայ մը, որ ան ատենը Օսիլեաքի վարժարանին մէջ աշակերտ էր :

Յովհաննէս Վիժիէ աղէկ աշակերտ մըն էր, հնազանդ, ուսումնասէր, իր ընկերներուն սիրելի և իր ուսուցիչներէն մեծարուած :

Հանդիսական պարգեւաբաշխութիւններու ատեն, որ դպրոցական տարին կը լմնցնեն, միշտ շատ մրցանակ

կառնէր, և ասով իր համեստութիւնը
չէր կորսնցնէր: Յովհաննէս աղէկ գի-
տէր որ իր ընտանիքը ձախորդութիւն-
ներ կրէր էին, բայց անոնց որ աստի-
ճանի ըլլալը չէր գիտէր, իր մօրը թըշ-
ուառութեան մէջ ինկած ըլլալուն ման-
րամասն տեղեկութիւն չ'ուներ:

Դպրոցին առատաձեռն ու ողորմած
վերակացուն միտքը դրեր էր անիկա իր
դպրոցին մէջ առանց վարձք պահանջե-
լու պահել: — Արբոր մեծնայ, կ'ըսէր,
ինձի կը հատուցանէ —: Սակայն ասի-
կա բաւական չէր, դպրոցին ծախքէն
զատ երիտասարդ աշակերտին պէտք
կ'ըլլար զգեստներ, գիրքեր, կտաւիք
և այլ ուրիշ շատ բաներ: Ասոնք ինչ
պէս մատակարարելու էր:

Մէկ քանի ողորմած մարդիկ, մա-
նաւանդ վիճակին ոստիկանը, և Չեանց
Սայր (ստուածածնին (Նօթա — տամ-
—տէ —նէժ) եկեղեցւոյն քահանան ըն-
կերութիւն ըրած էին թշուառ ընտա-
նիքին պիտոյքները հոգալու համար:

Բայց իրենց օգնու թիւնները բաւա
կան չէին ըլլար հիւանդկախ մօրը և տը
ղուն ծախքերը մէկէն հոգալու : Խոր-
հուրդ ըրին իրենց մէջը և որոշեցին որ
խեղճ այրի կինը հիւանդանոց դրուի :

Պէտք էր այս դիտաւորութիւնը ա
ռաջուց իմացնել երիտասարդ աշակեր-
տին :

Այս պաշտօնը դժուար բան էր , կը
վախնային տղուն վրան վիշտ և յուսա
հատութիւն բերելէն : Քահանան վը
րան առաւ աս բանը , և սա ճամբան
բռնեց : — Հինգշաբթի օր մըն էր , այս
ինքն աշակերտներուն դպրոցէն դուրս
ելլալու յատուկ օրը : Քահանան դըպ
րոցը գնաց , Յովհաննէսը փնտռեց որ
պէս զի այն օրը իր տունը անցընէ ժա
մանակը : Տղան ուրախութեամբ լըջ
ուած , կը հագնի իր նոր զգեստները
ինչպէս որ կ'ընէին սովորաբար պըտը
տելու կամ զըօսանքի մը համար , և
զուարթութեամբ քահանային հետ
դուրս կ'ելէ :

Քահանան անիկա իր տունը կը տանի և իր խուցը կը մանէ : Խուցին մէջ սեղանի մը վրայ էր իր ժամագիրքը : Քահանան գործքի համար դուրս կ'ելլէ , խոստանալով տղուն շուտով գալ , և անիկա մինակ կը ձգէ խուցին մէջ : Յովհաննէս մինակ մնացած , և չգիտնալով թէ ի՞նչ բանի զբաղի , կը տեսնէ ժամագիրքը սեղանին վրայ :

Չկարծէր թէ անողու շուժիւն մընէ աղօթքի գիրք մը բանալը , կը սխալի , բայց այս սխալը այս սրարագայիս մէջ գրեթէ ներելի էր : Ա՛ռնէ վերջապէս ժամագիրքը և կը բանայ : Մէջէն թուղթ մը կը սահի և տախտակին վրայ կ'իյնայ : Յովհաննէս կը վերցընէ անիկա , և իր աչքերը ահամայ կ'ուզղուին վրան պարունակուած բաներուն : Ի՞նչ կը տեսնէ , իր մօրը հիւանդանոցը ընդունուելու տոմսակը :

Տղուն աչքերը ամպով մը կը ծածկուին , տոմսակը կ'իյնայ իր գողգոջուն ձեռքերէն : Ար կարծէ թէ աղէկ չէ

կարդացած, նորէն կ'առնէ աղետալի
 թուղթը, նորէն նոյնը կը կարդայ : Ի-
 բաւցընէ իրեն մօրը վրայօք է բանը, իր
 մօրը հիւանդանոցին մէջ ընդունուե-
 լուն տամսակն է այն թուղթը :

Տղան կը շփոթի և կը դողայ, սր-
 տաչարժ աղաղակ մը կ'ելէ կուրծքէն
 ՍՏ, հիւանդանոցը, իմ մայրս հիւան-
 դանոցը — : Ան ատենը կ'իմանայ իր ըն-
 տանեաց վիճակը, որ մինչև ան ատեն
 իրեն չէին գիտցուցեր :

Քանի մը վայրկեան խորին մտածու-
 թեան մը մէջ ընկղմած կը մնայ, չցաւ իր
 իր ընտանեաց կորսնցուցած շքեղ վի-
 ճակին վրայ, չմտածէր այն հարստու-
 թեանը կորուստին վրայ, որ օր մը պի-
 աի ժառանգէր : Արիշ բան չմտածէր,
 բայց միայն իր ամենացաւալի թշուա-
 ռութեան մէջ ընկղմած և աղքատանոց
 մը աքսորուելու սպառնալեաց ենթա-
 թակայ եղող մօրը վրայով :

Իմ մայրս հիւանդանոց երթայ, ը-
 սաւ, սՏ բնաւ երբէք : Իսկոյն այս վայր-

կենին իր ընելիքը կ'որոշէ, որդիական սէրը չսուած զօրութիւն մը կուտայ իրեն, որքան որ տղայ է, կատարեալ մարդու մը քաջութիւն կ'զգայ վրան, ինչպէս որ անոր հաստատամտութիւնը և յարատևութիւնը կ'ունենայ ետքէն ալ :

Արմեկնի երիցատունէն, առանց մէկէ մը տեսնուելու դպրոցը կ'երթայ, կը ձգէ իր կիրակի օրուան զգեստները ամեն օրուանները կը հագնի, ու նորէն կուգայ :

Քահանան որ տղին երթալէն քիչ մը ետքը խուցը դարձած էր, շատ զարմացեր էր անիկա հոն չգտնելուն համար, և անոր հեռանալուն վրայ ան հանգիտ էր : Արբոր տեսաւ անոր նորէն գալը, առջի բերանը չտեսաւ հանդերձին փոփոխութիւնը, ու անոր ըսաւ :

— Ա՛հ, խեղճ տղայ, բացեր ես իմ ժամագիրքս, գիտես ամեն բան, և գացեր ես լալու համար պահուրտելու :

— Ո՛չ. Տէր Հայր, ըսաւ տղան, չեմ
լացած . . . իմ մայրս բնաւ հիւանդաւ
նոց չպիտի երթայ, հոն արամու թենէն
կը մեռնի : Ար ձգեմ կ'ելեմ դպրոցէն :
Ա'երթամ իմ մօրս հետ կը մնամ : Ա'օգ-
նեմ իմ մօրս :

Քահանան տղայ հասակաւ մէկու մը
ասանկ անակնկալ տպաւորութենէն
սիրտը շարժելով, չկրցաւ իր արցունքը
բռնել : Վրկեց տղան գորովանօք և ա-
նոր ըսաւ . — Վարեկամս, կը կորսնցը
նես քու ասպազադ . ասկէ դատ, ի՛նչ
պէս պիտի կրնայ քու հասակդ տղայ մը
իր մօրը օգնել — :

— Աստուած ինձի զօրութիւն կու-
տայ, և այս զօրութիւնը պիտի աճի հա-
սակիս հետ : Չգեցի իմ գեղեցիկ հա-
գուստներս՝ ալ չհագնելու ուխտիւ, ա-
նոնք պիտի ծախեմ, իմ մօրս առաջին օգ-
նութիւնները ընելու համար : Յովհան-
նէսին միտքը դարձնելու համար, քահա-
նան կանչեց ան անձերը, որ աս ընտանիքին
հոգ կը տանէին այսինքն դպրոցին վերա-

կացուն ու ստիկանը, որոնք պարապ տեղը հակառակեցան աղին խորհուրդին :

— Տղան, կ'ըսէին անոր, մտածէ անգամ մը քու վերջդ : Քու ուսմունքներըդ յաջող կերպով առաջ կ'երթան : Կարողէն ժամանակին ելլելով, պիտի կրնաս ընտրել քու կենացդ ընթացքը : Ընչուչտ պիտի ստանաս կառավարական օգնութիւններ :

Պիտի ըլլաս ինչ որ ուզես, պաշտօնակալ, երկրաչափ, բժիշկ, փաստաբան, դուն նորէն պիտի ստանաս ընտանեացքդ կորսնցուցած վիճակը, անչուչտ դուն կը հանես ան ատեն քու մայրդ աղքատանոցէն, իր ծերութեան օրերուն պատիւ և օգնական կ'ըլլաս : — Ա՛հ, պատասխանեց տղան, դուք իմ մայրս չէք ճանչնար, թէ որ աղքատանոցը մտնէ, վեց ամսուան մէջը կը մեռնի : Հատ երջանիկ պիտի ըլլայի թէ որ ուսմունքներս ըմբռնէի, բայց իմ պարտքս, զոր սրտովին կ'զգամ, իմ մօրս հետ կենալն է, անիւ կա խնամելն և անոր օգնելն է : Իմ

սլարտքս պիտի կատարեմ, ու երջանիկ
պիտի ըլլամ անիկա կատարելովս — :

Յովհաննէս արդէն փոքրիկ գեղե-
ցիկ գրքատուն մը կազմած էր ստացած
մրցանակներովը , ոսկիէ ժամացոյց մը
ուներ , որն որ ոստիկանը իրեն տուեր
էր , գեղեցիկ զգեստներ ուներ , ամե-
նը ծախել տուաւ , պղտիկ վաճառա-
կանութեան մը ձեռք զարնելու համար :
Փերեզակ մը եղաւ , կարկանդակ ու տը-
ղայոց խաղալիք կը ծախէր . ամեն մարդ
կը զարմանար վարքին վրայ , և կը հա-
ճէր անոր հետ առուտուր ընելու : Ա-
սանկով թէ իր մօրը և թէ իրեն համար
հաց վաստկեցաւ :

Յովհաննէս երբոր մեծցաւ ու զօ-
րաւոր եղաւ , պանդոկի մը մէջ բեռ-
նակիր եղաւ , աս սլաշտօնը շատ դըժ-
ուարին արուեստ մըն է , բայց բաւա-
կան կը վաստրկէր իր մայրը աղէկ նա-
յելու չափ :

Արովհետեւ քսան և հինգ տարիէ 'ի
վեր օր մը խեղճ այրի հիւանդը մինակ

չձգեց , որդիական կատարելագոյն անձնանուիրութեան օրինակ ըլլալէն չդադրեցաւ . անոր քով կ'անցընէր ամեն այն ժամանակները , որ իր զբաղմունքները կը ներէին , և միշտ իր ձեռքին վրայ մայրը կը թընած կ'երթար արևոտ օրեր դաշտերուն մէջ հնձաքաղին թողած հասկերը քաղելու համար :

Պանդոկի այսպիսի ծառայութեանը մէջ մարդս շատ արհամարհանք կը կրէ , բայց Յովհաննէս Վիժիէ՝ թէ և վեհ սիրտ մ'ունէր , սակայն անտրտունջ կը համբերէր ճանապարհորդներուն անտեղի հաճոյիցը ու յանդգնութիւններուն , որ չէին գիտեր թէ ո՞վ էր ինքը , և ի՞նչ արժէք ունէր , գիտես թէ իր ազնիւ վարուցը զգացմանցը մէջ կը գանէր ամեն բանի համբերելու զօրութիւնը :

Բայց անոնք որ անիկա կը ճանչնային , կը յարգէին ու կը զարմանային անոր վրայ . իր դպրոցին հին ընկերները , որբան որ իրենց ընկերական վիճակը շքեղ ալ էր , միշտ առաջուան մտեր-

մութիւնը անոր կը ցուցնէին , չկար
մէկը անոնց մէջէն որ երբոր խեղճ բեռ-
նակրին հանդիպէր , անոր ձեռքը սեղ-
մելը և անոր հետ խօսելը իրեն պատիւ-
ու զուարճութիւն չսեպէր :

Գ Լ Խ Ա Ի Ո Ր Մ Ա Ր Դ Ո Յ , Ծ Ե Ր Ե Ր Ո Ւ
Ե Ի Բ Ա Ր Ե Ր Ա Ր Ն Ե Ր Ո Ւ Պ Ա Ր Տ Բ Ե Ղ Ա Ճ
Մ Ե Ծ Ա Ր Ա Ն Բ Ը

Կան անանկ մարդիկ որոնց համար
որդիական զգացմանը քիչ կամ շատ մօ-
տեցող սէր մը խմանալու էնք :

Ինչպէս կը պարտաւորինք մեծարել
մեր գլխաւորները դատաւորները և
հասարակաց իշխանութեան ամեն ա-
ւանդապահները :

Նաև պէտք է որ կրօնից պաշտօն
եայները մեր տղայութենէն 'ի վեր մեր
մեծարանացը առարկայ ըլլան . իրենց
անձը մեծարելը միայն բաւական չէ ,
պէտք է անոնց պատուէրներուն ալ հե-

տեղի, պէտք է մտիկ ընել բարեպաշտական մտադրութեամբ այն Աստուածային բարոյականութիւնը, որ մեզի Աստուծոյ կողմէն կը քարոզեն, մանաւանդ պէտք է որ մեր վարքը այն բարոյականութեանը յարմարցընենք :

Վաստիարակը որ մեր տղայութեանը խնամք տարած է, Աստուծոյ ու մեր ճնողաց Գործածած պաշտօնեան է, որ մեր միտքը բանայ, և մեզի բարի վարուց վարժեցնէ . այս պատճառաւ միշտ մեզի սիրելի ըլլալու է : Այլ որ մեր կրթութիւնը կը լմնայ, պէտք է պահենք անոր համար խորին երախտագիտութիւն մը, ու սիրոյ և մեծարանաց նշաններ ցուցընենք անոր :

Տղայ մը պէտք է որ իրմէ մեծ անձերուն միշտ պատիւ ընէ, բայց մանաւանդ կնիկ մարդոց ու ծերերուն : Ով որ ծերի մը վրայ կը ծիծաղի, չար ու վատ մէկն է, ու ամեն մարդ զինքը կ'անարդէ :

Պէտք է պատուել ծերերը ամեն

կերպով, կրել համբերութեամբ այն
 գէշ բնաւորութիւնը, որ երբեմն հա-
 սակնին իրենց կ'ազդէ. պէտք է ամեն
 տեղ պինտ աղէկ տեղերը զիրենք նըս-
 տեցնել, և իրենց ամեն տեսակ ակնա-
 ծուծիւններու յարգանքներ ցուցնել:

Թէ որ մէկը մեր հօրը կամ մեր մօ-
 րը բարութիւն մ'ըրած է, չկորսնցը-
 նենք բնաւ անոր յիշատակը: Թող այն
 անձը մեզի համար մասնաւոր մեծա-
 լանքի մը առարկայ ըլլայ: Տղայ մը իր
 հօրն ու մօրը ատելութիւնները իրեն
 սեպհականելու չէ, որովհետեւ կրօնքը
 մեզի կ'արգիլէ որ ս' և իցէ մէկը չա-
 տենք, և մեզի կը պատուիրէ ներել ա-
 նոնց որ մեզի չարիք ըրած են. պէտք
 է որ տղայ մը մասնակից ըլլայ այն ե-
 րախտագիտութեանը որ իր ծնողքը
 կը նուիրեն իրենց բարերարներուն. և
 պէտք է որ այս երախտագիտութեան
 զգացմունքները ծնողաց իրեն թողու-
 ցած ժառանգութեան մէկ մեծագոյն
 մասը համարի:

Երբեմն երեսէ ձգուած կամ խեղճ տղայ մը՝ ազգականէ մը կամ օտարէ մը հօր պէս խնամքներ կ'ընդունի :

Երբեմն հօրեղբայր մը կամ մօրեղբայր մըն է, որ կը կըլթէ իր եղբօրսրդին կամ քեռորդին, և անոր խնամակալութիւնը իր վրան կ'առնէ. երբեմն սղորմած սիրտ մարդ մը որբի մը վրայ կը գլթայ, անոր պիտոյքները կը հոգայ, անոր տղայութեանը վրայ կը հսկէ, և անոր արուեստ մը կը սովրեցնէ կամ սովրեցնել կուտայ, որ իր ապրուստը ձարելու կարող ըլլայ :

Այսչափ առատաձեռն բարերար մը հօր ու մօր չափ իրաւունք ունի : Տրդան կը սարտաւորի անիկա մեծարել, սիրել, անոր հնազանդիլ, վստահիլ և խօսքը մտիկ ընել, պէտք է որ բոլոր կեանքին մէջ անոր համար երկիւղած ու գորովալից երախտագիտութիւն մը պահէ սրտին մէջը, ու զայն յայտնէ աւելի գործքերով քան թէ խօսքերով :

Ահա այսպէս ըրաւ փոքրիկ Ատէլան , որուն վարքը պիտի պատմենք հիմա :

Այսպէս կը վերջացնենք այս տղա յոյ համար ընտրուած փոքրիկ գիրքը ինչպէս որ սկսեցինք իրենց յիշեցնելով թէ երախտագիտութիւնը սուրբ պարտք մըն է , առանց երախտագիտութեան բնաւ առաքինութիւն չ'ըլլար , և հետեւաբար ալ երջանկութիւն :



Փ Ո Ք Ր Ի Կ Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ո Ւ Հ Ի Ն

Ատէլա՛ Քայիէ Պզանսօնի մէջ ծընած աղքատ զինուորի մը աղջիկ էր :

Իր տղայութեան ժամանակը Փարիզի մէջ կտաւեաց աշխատող Տիւքօմիէ տիկինին խնամքները ընդունեց , որ իրեն իր արհեստը սովորեցուց :

Ատէլա՛ իր բարերարութիւն շնորհիւ ըրաղէկ գործաւոր մ'ըլլալով , իր ծընած երկրին մէջը կ'աշխատէր , և պատուով իր ապրուստը կը ճարէր :

Ահի մըն ալ իմացաւ որ Տիւքօմիէ

տիկինը հիւանդացեր էր : Ամեն բան
թողուց , ու վազեց անոր քով գնաց :

Ան ասե՛նէն ՚ի վեր Տիւքօւմիէ
տիկնոջ առողջութիւնը օր ըստ օրէ աւելի
գէշցաւ : Աւարձքը սաստիկ բըռնուեցաւ ,
չնչառութեան դժուարութիւններէն յաճախ
կը տանջուէր , ահանկ որ աշխատելու և
ծանր գործի մը ամենևին չէր կրնար
ձեռք դարնել : Գործատանը բեռը և
տանը հոգերը բոլորովին վրան առաւ
Ատէլլա , և իր խորին և գորովալից
երախտագիտութեամբը հիւանդին
վիճակին պէտք եղած բոլոր
ծառայութիւնները կ'ընէր :

Եւ որովհետև հիւանդութիւնը շատ
տևեց , ժամանակ մը եկաւ որ Տիւքօւմիէ
տիկինին իր պիտոյքներուն հասնելու
չափ ստակ չ'մնաց , ուստի պարտաւորեցաւ
ծախել աալ գրեթէ բոլոր կահ կարասին .
ինչ որ տանը մէջ բարեկեցութիւն մը
կերեցնէր , աներևոյթ եղաւ . քիչ
ժամանակէն տանը մէջ թշուառութեան
և զրկանաց տեսարան մը կը տիրէր :

Ատէլլա ամեն բանի հասար, բնաւ չէր վհատեր ոչ կրած նեղութիւններէն, ոչ ամեն օրուան յանձն առած զրկանքներէն, միայն հիւանդը խնամելու համար աշխատութիւնը ձեռքէն կը ձգէր, շատ անգամ ալ գիշերը կ'երէր հիւանդին վիճակին պահանջած դարմանները պատրաստելու համար:

Երբեմն հիւանդը ինքզինքը քիչ մը աղէկ գտնելով, կ'ուզէր նորէն գործքի ձեռք զարնել, բայց իր աչքին տկարութեանը պատճառաւ, Ատէլլա իր վարպետուհիին շննածը քակելու և նորէն սկսելու կը պարտաւորէր:

Միայն այս բանը ընելու համար անկէց կը պահուրտէր և կ'ըստասէր որ քընանայ. որպէս զի իրեն ցաւ չտայ:

Խեղճ հիւանդը մեռնելէն ութ աւ միտ առաջ բնաւ անկողինէն չ'երաւ: Ատէլլա չ'ուզեց հաճիլ որ անիկա հիւանդանոցը դնեն, հատցուց իր յատուկ վաստրկածները, և պատանդ դրաւ իր կահ կարասին հիւանդին

կարևոր ծախքերուն հասնելու համար :

Այս անձնանուիրութիւնը հիացման արժանի ըլլալուն պատճառը այն է որ մէկ քանի շաբաթ, մէկ քանի ամիս չտուեց, հասարակարանակ տասն ու երկու տարի, առանց այս առաքինի աղջրկանը եռանդը վայրկեան մը թուլնալու :

ՎԵՐՁԻՆ ԽՐԱՏՆԵՐ

ԸՆՏԱՆԻՔ

Վեռահասակ աշակերտաց համար յատկացած այս փոքրիկ գիրքը վերջացրնելէն առաջ, պէտք է որ իրենց ապագային վրայ մէկ քանի խիստ հարկաւոր տեղեկութիւններ տանք անոնց :

Առաջինը այն է որ իրենց ծնողացը հնազանդ և երկիւղած երևելով անըզգայի կերպով և առանց աշխատութեան պիտի ստանան գրեթէ զիրենք բարի մարդ ընող բոլոր հանգամանքները :

Արդարև ընտանեկան առաքինութիւնները բոլոր ուրիշ առաքինութիւն

ներուն վարժութիւն մը են, ու ընտանեկան սրարտուց կատարելը բոլոր ուրիշ սրարտերուն կատարումը քաղցր ու գիւրին կ'ընէ :

Կանուխկեկ ամեն ազնիւ բաներու վարժուած հոգին, ալ վերջը չկրնար ուրիշ սովորութիւններու հակիլ, տղայութենէն ՚ի վեր մաքուր և սուրբ սիրով անած հոգին ալ ուրիշ սնունդ չ'ուզէր :

Օրինակի համար, այն մարդը որ իր ընտանեացը անձնանուէր է, կը սիրէ աշխատութիւնն ու գործունէութիւնը, որոնց օգնութեամբը կրնայ իրեն բարեկեցութիւն մը պատրաստել, կը սիրէ կարգ ու կանոնը որոնք մինակ կրնան այս բարեկենդանութիւնը հաստատել : Աւրեմն ընտանեկան առաքիւնութիւններ գործելը՝ բոլոր գովելի և ազնիւ զգացումներու ճնանելուն պատճառ կ'ըլլայ :

Մաքուր՝ և միշտ նորածին զուարճութիւններու աղբիւր մըն է անիկայ : Մանաւանդ անտէ որ մարդ երջանկու-

Թեան կ'արժանանայ և զայն կը վայելէ :

Երջանկու թիւնը սովորաբար առաքինի և քաջ միաբան ընտանիքի մը վարձքն է :

Ի՞նչպէս դուրսը կրնանք գտնել անկեղծ և աւուղակիան սէրեր, թէ որ Աստուծոյ մեր տանը մէջ դրած սէրերը չճանչնանք : Արժանի կրնանք ըլլալ արդեօք ճշմարիտ զուարճու թիւններ վայելելու, թէ որ մենք անզգայ ըլլանք անանկ ամենամաքուր զուարճու թիւններու որոնց աղբիւրը բնու թեան և առաքինու թեան մէջն է :

Արեմն կարելի է որ բնաւ երջանկու թիւն չգտնէ ան տղան որ ընտանիքէն դուրս կը բնտուէ զայն :

Ա՛ր կը յուսայ երջանկու թիւն գրունել :

Արդեօք խաղալիքներու և զբօսանքներու մէջ, կամ աղմկալից զբաղանանց մէջ կը բնտուէ զայն :

Սակայն զբօսանքներն ու խաղալիքները քանի մը վայրկեան միայն մեզ կը

զբօսցունենն , աղմկալից զբաղմունքները միայն մեզ քիչ մը կը թմրեցրնեն և սրտերնիս պարաս կը թողուն : Բնդ հակառակն ընտանեկան ուրախութիւնները կատարելապէս գոհ կ'ընեն սրտերնիս , իրենց զուարճութիւնը բնաւ չսպառիր , որքան որ անոնք կը վայելէ մարդ , այնքան ալ կ'ուզէ վայելել :

Եւսկէց գուրս մի միայն անցաւ որ և երկդիմի զուարճութիւններ կան , և սուտ բերկրութիւններ կը վայելենք :

Անկեղծ սէրը , ճշմարիտ զուարճութիւնները ընտանեաց մէջն են , բարի և առաքինի ծնողաց , խնամարկու և գորովալից կնոջ մը , երկկուզած և հնազանդ զաւակաց և անանկ բարեկամներու մօտ են , որոնք արիւնն ու սէրը մեզի եղբայր ըրեր են :

Այս սիրելի էակները կը մեղմացունեն մեր վիշտերը անոնց մասնակից ըլ-

լալով, մեր ուրախու թիւնները անոնք
ալ զգալով՝ կրկնապատիկ կ'ըլլան մեզի
համար :

Արանի՛ թէ այս վերջին խրատը այն
օրերէլի տղայոց յիշողութեանը մէջ մը
նար, որոնք նորածին բանականութիւն
նին վարժեցնելու համար, այնչափ մը
տաղրութեամբ իրենց պարտքերը սով-
բելով իրենց համար նոր կարգալու ար-
ուեստին ալ տեղեկացան :

Արանի՛ թէ որդիական սէրը, որն որ
իրենց սիրտը ազգու կերպով տպաւո-
րեցաւ, անոնք զարգացընէր մարդս
պատուաւոր և բարի քաղաքացի ընող
բոլոր առաքինութիւններով :

Արանի՛ թէ մատաղ հասակնուն մէջ
իրենց ծնողացը պատիւ և ուրախու-
թիւն ըլլալէն ետև, վայելէին այն բու-
վանդակ երջանկութիւնը որ ընտանե-
կան կեանքը կրնայ տալ :

ԱՆՈՒԱՆԻՅ

ՄՇՏԵԶԵՆԱԻՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ

Ի յիշատակ անմահ հոգւոյ
Յակոբ Պատրիարքի Նալեան :

Ի յիշատակ անմահ հոգւոյ
Պաղտասար պատուելոյ :

Ի յիշատակ անմահ հոգւոյ
Գրիգոր պատուելոյ Փէշտիմալձեան :

Ի յիշատակ անմահ հոգւոյ
Նիկողայոսի Մ. Զօրայեան :

Ի յիշատակ անմահ հոգւոյ
Երանուհի տիկնւոջ Յ. Եէմէնիձեան :

Ալիքսան Յ. Խօրատանձեան

Ահարոն Վարպետեան

Անդրանիկ Պէյ Կրճիկեան

Գառնիկ Յ. Յովակիմեան

Գրիգոր Ատափաղարցի Տէր Գէորգեան

Գրիգոր Խուրտաձեան

Գրիգորիկ Կ. Պալեան

Դանիէլ Մարկոսեան

Եսայի Մ. Անուխեան
Լէոն Մ. Գաբամաճեան
Խաչիկ Մակաղեան
Կարապետ Սագայեան
Ճանիկ Պէյլիճեան
Մկրտիչ Պէնտերլեան
Յակոբ Ոսկան
Յակոբիկ Կ. Պալեան
Յարութիւն Մարգարեան
Յովհաննէս Յակոբեան
Յովհաննէս Յ. Ամիրաղով
Յովհաննէս Պ. Հովուեան
Յովհաննէս Ստարթալբեան
Յովսէփ Գաբամաճեան
Նիկողայոս Տէր Շմաւոնեան
Նշան Հարէնց
Պօղոս Մէրասեէտիեան
Ռուբէն Յ. Քիւրքճեան
Սարգիս Մ. Գաբամաճեան
Ստեփան Ա. Ամիրաղով
Տիգրան Մ. Գաբամաճեան :

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՐԴԵԱՄԲ ՏՊԵԱԼ ԳՐԻԵՐՆ ԵՆ

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

1. Լուսինորդ Հայ ընկերցանութեան կամ Նոր Բերալիան և Հեգարան: 32 Երեսէ բաղկացեալ. գին 1 զուրուշ:

2. Թոսագիտութիւն համարօք. Թուալ գիտութեան սկզբունք չորս գործու զուլթիւնները թէ պարզ և թէ տասնորդական թիւերով կատարելու կը վարժեցնէ: 128 Երեսէ բաղկացեալ. գին 3 զուրուշ:

3. Նախագիտելի Մանկանց. Տղայք հեգով կարդալը սորվելէն վերջը ընթերցանութեան վարժըվելու համար յօրինված. գին 5 զուրուշ:

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ք

4. Ընդունի Պեպրոս. Աղեքսանդր Տիւմա մեծանուն հեղինակին մէկ ըն-

տիր վկայասանու թիւներ = 75 երեսէ բաղ-
կացեալ. գին 3 զուրուշ:

5. Բարոյական Գլխաւոր. Հատոր
Բ = Գլխաւոր փիլիսոփային՝ Ուն-
կընդրութեան վրայ շինած մէկ ճառը.
գին 2 զուրուշ:


6. Բարոյական Գլխաւոր. Հատոր
Գ = Գլխաւոր փիլիսոփային՝ Ճշ-
մարիտ բարեկամը շողքորթէն զատե-
լու վրայ գրած մէկ ճառը. գին 3 զր՛շ:

7. Պարս Ընդոյ. Ներկայ գրքակա-
սոր տղոց պարտականութիւնները կը
սորվեցնէ ազգու խօսքերով և ընտիր
պատմական օրինակներով: 132 երեսէ
բաղկացեալ:

ԲԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵԼԻՔ

8. Համառօտ ճաշկառ Քանի մը
ընտիր մատենագիրներէ՝ հանդերձ վեր-
լուծութեամբ. Գերականութիւն սոր-
վողներուն գիւրութեանը համար.





1560

2013

0025686

